

15 ԿՈՍՅԵՐԻՏԱՒՈՒԹՅԱՆ
ԱՄՅԱԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱԼԱԶԱՆ

Դ Ա Ս Ա Լ Ի Ք Ը

Յեկրոցի հրատարակություն

ВНЕДРОСТА
ИНСТИТУТ
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Ленинградского
Университета
СССР

891.99

Ա-28

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1 9 3 4



57-11
ՍԶ 612

20 MAY 2005

ԿՈՄԵՆՏԱՐԻՆԻՐԵԱՆ 15-ԱՄԵՍԿԻ ԳՐԱԳԱՐԱՆ

DEC 2010


891.99
Ա-28

ԱԼԱԶԱՆ

Դ Ա Ս Ա Լ Ի Ք Ը

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Империал Науки
СССР

Յերկրագր հրատարակություն



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1984

19734

Պատ. խմբագիր՝ Ս. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ց. Խաչվանճյան



60576-67

Սրբազրիչ՝ Վ. Տերոյան

Հանձնված է արտադրության 4 մարտի 1934 թ.
Ստորագրված է ապագրելու 4 ապրիլի 1934 թ.

Քլավրևա 8478 (բ). Հրատ. 2910. պատվեր 468. արժավ 8000
Պետհրատի տպարան—Յերեվան

ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐԱՏԱՐԱԿՈՒՅՑԱՆ ԱՌՔԻՎ

«Պատասխիզը» շոշափում է անցած, վերականգնման շրջանի թեմատիկա, վորն ինչ խոսք ներկայումս ակտուալ լինել չի կարող: Գրված լինելով ՀԼԿՅԵՄ կենտրոնի «սոցիալական պատվերով», վիպակն իր ժամանակվա համար հրատապ խնդիրներ եր շոշափում: Վիպակը պետք է դիտել վորպես կոմյուրիստական կյանքի անցած շրջանի գեղարվեստական վերաբրտադրման փորձ:

Ոգտվելով լերկրորդ հրատարակության առիթից՝ վիպակում կատարված են լեզվական, վոճային մասնակի ուղղումներ և կրճատված են վերջին լերկու զըլուխները:

ՀԵՂԻՆԱԿ

1934 թ., հունվար

Կիսաքաղ արտի ծայրին, նստել եր ցորենի դեզը:

Շուրջը՝ փխրուն սևահող եր:

Հողի յերեսին, սանդերքի առամների պես ցցվել էյին նոր քաղած ցորենի դեզին ցողունները:

Միապաղաղ անապատում մեկ-մեկ յերևա ցող ոռզիաների յայնատերև արմավենիների նման, արտի դեզին տարածութեան մեջ նըլմարվում էյին յերինջնակի փշոտ թփերը, վորոնք զխտավորյալ կերպով դուրս էյին թողնված մանգաղի բերանից:

Փխրուն հողի յերեսին, ցողունների մեջ, կամ հողում թաղված քարերի վրայով, աշխույժ խլրտում էյին հողագույն մողեսները և փոքրիկ իսկ խշոցից՝ տասնյակ տեղերից թռչոկտել էյին սկսում կանաչավուն կիտուռները:

Յերբ արևը զիչ թեքվել եր սկսում զեպի դիմացի ցորնագույն սարը և զեզի կողքին ստվերի մի շերտ փռում, քաղվոր Արտոն դե-

տին եր գցում մանգաղը, հնամաշ արխալուղի փեշերով սրբում ճակատի քրտինքը և ինքն իր հետ կամաց խոսելով, դեզի մոտ եր գալիս, հանգստանալու:

Գլխին՝ կարկատած մոխրագույն կեպի յեր, վորի առջևի մասում, նա լրագրի մի կըտոր եր ամբացրել արևի շեշտակի ու կիզիչ ճառագայթներից դեմքը պաշտպանելու համար:

Յերկու կողմերից, լավաչների նման, կեպու վրա բացվել էյին նրա նոսր ու մեծ ականջները:

Գլխին ուղղաձիգ կերպով իջել եր մինչև մերի չրթունքը, ջիչ կլորվել ու կանգ առել, խոզնելով յերկու լայն ու բավականին կեղտոտ անցքեր:

Գլխից ներքև, վերի չրթունքի վրա, պըսպղում էյին վոսկեգույն աղվամազերը: Նման աղվամազերի յերկու փունջ էլ նրա ծնոտի յեր կու կողմերում:

Արխալուղի քանդած կոճակների տակից յերևում եր նրա քրտնած ու վոսպնագույն կուրծքը:

Արտոն մենակ եր քաղում իրենց արտը:

Նրա հայրն արդեն բանից ընկել եր: Ինքն էլ վոր վաթսուն տարեկան դառնար ու այդ վաթսունից՝ հիսունը չարաչար աշխատանքի մեջ մխսեր, նրա որին կընկներ:

Մայրն էլ՝ յերերվելով հաղիվ հաց ու թան եր բերում քաղվոր վորդուն:

Իսկ տանն էլ, դրանցից զատ ուրիշ վոջ վոջ չկար:

Նստում եր Արտոն դեղատակի չվաքում ու ինքն իրան միտք անում:

— «Ես էլ կյա՛նք ա, ես էլ ապրու՛ստ ա:

Առավոտից ընչանք իրիկուն արուն-քրտինք թափի, արևի տակ տապակվի ու մի քասա թանով փոր կշտացրու: Յանի ես դիփն ո՛ւմ համար, ընչի՞ համար, ինչս ա մնացել ես չոգ ու անջուր չորում: Ես էլ հալբաթ կոմսոմոլի կյանք ա էլ՛ի: Թքած ըսենց կոմսոմոլի կյանքին: Թե պտի ելի ըսենց չարչարվեյի, յանի ել իի կոմսոմոլ գրվեցի: Չե՛, իմս քաղաքն ա, ինչքան ուղում են դողոսն եդ պառալին ու հալիվորը... Քաղաքի ու ըստեղի կյանքն էլ հալբաթ մե՛կ են... Գնա քեդ համար մի քանի սըհաթ ծառայի ու ընդուց դենը դուս արի բուլվար, պրաժեկտոր ու քեֆդ արամիչ արա...»:

Դեղատակին նա յերկար եր մտածում ու խոսում ինքն իրեն, ապա մտքի թևերով քաղաք փոխադրվում: Հազար տեսակ պաշտոնի մտնում: «Ես մեկը լավ չի, փողը քիչ են տալիս... Են մինը վոնց վոր ավելի լավն ա... Են մեկելը դհա լավն ա... Ես ինչ լավ կյանք ա, ես ինչ լավ ապրուստ»: Ռոճիկը՝ շա՛տ, սենյակը՝ լա՛վ, «քաղքվարի»: Մագերը կտրած կոմյերիտուհիների հետ «ծանոթվում»: Ամեն ոք թատրո՛ն, կինո՛: Ինքն էլ իրանց գյուղի վարժապետիցն ավելի «բան Փահմող» ու «գիտուն»... — «Ուխա՛յ, կյանքն էլ գաթի ես

ա», — մտածում եր Արտոն ու նորից սթափ-
վում դեզի շվաքում:

Յերկար եր միտք անում Արտոն այսպես
ու յերբ «յերանելի» մտքերի շարանը կըտր-
վում, կամ վերջանում եր, վոնց վոր յերա-
զում, մի սև ոճ դարձած, նրան եր մոտենում
ու կարծես ձեռներին եր ուզում փաթաթվել
մանգաղը:

Ելի յեր մտածում նա, ապա պապակած
կոկորդը թրջում դեղատակին թեք ընկած
կժի գոլ ջրովը, վեր կենում տեղից և դանդաղ,
դանդաղի յեսեվից գնացող հուշարկամորի պես
գլխիկոր ու մտազբաղ, որորվում դեպի ար-
տըն ու մանգաղը:

Նման որերից մեկն եր:

Միալար սվիցոցով բանում եր կեռ մանգա-
ղը:

Հասկերն որորում եյին վոսկեզույն, կոր
դլխիկները և գետին փովում ամբողջ հասա-
կով:

Քաղում եր Արտոն, սակայն ինքն ել չեր ի-
մանում արտո՞ւմն ե թե քաղաքում...

Հասկերի վոսկի գլխիկների միջից — քա-
ղաքն եր փովում նրա դեմ իր ուղիղ փողոցնե-
րով և սև քարաշեն տներովը:

...Քաղաքը... տները... պրաթեկտոր...
թատրոն... պաշտոններ... ու ... մազերը
կտրած կոմ յերիտուհիներ...

Քաղում եր Արտոն, «յերանավետ» մտքե-
րին հանձնված:

Աչքերով՝ անմիջականորեն արտն ու ման-
գաղն եր տեսնում, բայց մտքի աչքերով սը-
լանում եր հեռուները...

Բայց մանգաղը դավաճանեց նրան: Յորնի
յինջի հետ նա քերեց Արտոյի ձեռքը, կառմիր
ու տաք հեղուկով ներկելով դեղին ցողուններն
ու գորչ հողը:

— Յես ել հանդ գնացող չեմ. բոլ ա, հողիս
կերաք, ես ել ապրուստ ա, ես ել կյանք ա,
թքած ըսենց կյանքին: Յես ձեզ ասում եմ թող
արեք քաղաք գնամ, փող աշխատեմ, դարկեմ
ձեզ դուք թեք ընկեք, աղավաղի կերեք. հա-
մա դուք մի կողի ընկած, մի բաշ ձեր եչն եք
քշում: Ձեռս ել վրեն տվի, բոլ ա, ել ինչ եք
ուզում: Հո չեք ուզում վոր ջանդակս ել ար-
տում շուն ու կիլի փայ դառնա...

— Ա՛յ բալա, փորձանք ա, պատահում ա,
ցավն ու փորձանքը մարդկանց հմար ա ստեղծ
ված, հո սար ու չոլի հմար չի՞ — հաստ
ձայնով վրա բերեց Արո ասլին, թաղբեհի հա-
տիկները չխչխկացնելով:

Ապու մեծ մոթալը մինչև ականջներն եր
իջել:

Թալ հոնքերը հավի բացված թևերի ե-
յին նմանվում, վորոնց ներքևում, ցանցառ ար-
տեվանունքների տակից, խաղողի ճխված հա-

տիկներին նման, յերևում էյին նրա ջրակալած բերքերը:

Յերբ ապին դողդոջ ձեռներով բռնած խըմում եր թանը, բեխերը փոփում ու ծփում եյին նրա յերեսին, վոնց մամուռը՝ ջրի յերեսին: Թանի քասան հետ տանելուց հետո, նա բերանն եր քաշում թաց բեխերը և ախորժակով ծծում:

— Բա՛, բա՛լա, հաց աշխատելը, քյուլը ֆաթ պահելը դիդաս թե հեշտ բան ա՞... Բա յես ինչ չարչարանքով եմ քեզ եդ յաշին հասցրել: Յերեսուն տարի մենակ Գարսեան աղի կշտին եմ նոքարուլթյուն արել, դոմչի հետ հաշան եմ կրել, յեզան հետ կամ եմ քաշել ու ես մեջքով ամեն առավոտ թամզել, դուրս եմ թափել քսան տավարի աղբը: Սավայի եդ, քանի՛ հետ պլետ ու դադանակ եմ կերել ապիցս: Բա՛ բալա՛ ջան, ոջախ դնել, հաց վաստակել քուլֆաթ պահելը հեշտ չի՞... Ընչանք հմի վոնչ ֆող եմ ունեցել, վոնչ մալ: Հիմի յել փառք աստծու, Սավետի զակոնը հաստատ մնա, ֆող ել տվեց, արտ ել, ել ինչ ես դարդանում, բալա ջան, վար ու ցանքս արա ու քեզ հմար արխային ապրի, ելի՛...:

— Ե՞՞... ելի հին նաղլներն սկսեցիր: Իմացա՞նք: Հմի ի՞նչ անենք վոր դու ըտենց ես ապրել, քու ասելով պտի յես ել ըտենց ապրեմ, ի՞նչ ա: Են քու վախտը դնաց և իրա զակոնն ել հետը տաքավ, հիմի այամը փոխվել ա, փոխվե՛լ...:

— Բա՛ն չունեմ, բալա ջան, իմ ասիլս ել են ա, վոր յես ես ոջախը դրել եմ, լավ թե փիս շեն եմ արել, դու յել գլուխ տար, կրակը վառ պահի՛ր ոջախումս: Ես աշնանն ել գաթի, Տերը կամենա, մի հորվորդի, հալալ կաթնակեր աղջիկ կճարենք, վոր դա մորդ քոմագ ըլի: Ի՞նչ անեմ, բալա ջան, իմս պրծել ա, ել ձեռս բան չի բռնում, մի քանի՛ տարի յել պահիր ու պատվով ֆողը դիր հորդ գլուխը:

— Ապի՛, դու ելի, հա քու ասածն ես գոռում, ի՞նչ անեմ դատարկ ոջախդ, ինձ ուսում ա պետք, ե՛... ուսում...:

— Ըստի յել են կարդացնում վորդի՛, իրիկնեցը պնիմները հվաքում կարդում են, դու յել գնա կարդա, քեզ ով ա բան ասել — վրա բերեց Արտոյի մայրը, վոր գլուխը քարչ, մեծ ասեղով տղի ծակ գուլպաներն եր կարկատում:

— Ե՛հ, նանի՛, դու յել յանի բան ասիր ելի՛, նրանց կարդացնիլն ինձ փոր չի կշտացնում: Յես պտի քաղաք դնամ և մեր վարժապետիցն ել «գիտուն» դառնամ...:

Նավթի ճրագը, կուչ յեկած սև ճրագակալի վրա, լուռ հեկեկում եր:

Այդ հեկեկոցի տակ, դեռ յերկար զրուցում էյինք նրանք, հայրն՝ իր ոջախի հեռանկարների, իսկ վորդին՝ քաղաքի մասին:

Ամառային պարզկա գիշեր եր:

Ամեն ինչ լուել եր գլուղում:

Հակառակ ցերեկվա այրող շողին, գիշերը հով եր և ճանապարհորդութեան համար հաճելի:

Յերկու լավաչ, մի կտոր պանիր փաթաթելով հին թաշկինակի մեջ, Արտոն մեջքին կապեց, վերցրեց ձեռնափայտը և դուրս յեկավ տանից, յերբ ապին ու իր պառավը խումփացնում էին և կամացուկ շշնջաց —

— Մնաք բարով. ձեր ոջախը ձեզ ընի, յես չուզեցի ես ոջախը...

Գլուղի նեղ փողոցներով նա անցնում եր գողի նման կասկածամիտ: Նրան թվում եր վոր ամեն մի խոտադեզը, կամ աթարի ամբողջը մի-մի փափախներ են, վորոնց տակ պահ մտած գլուխներն՝ աչքերը չուած, ականջները լարած, հետևում են իր ամեն մի քայլին: Ահա են մեկը վոնց վոր ապու փափախը լինի: — «Չնի ապին գալիս ա...» մտածեց Արտոն ու առանց մարմինը շարժելու, գլուխը դեպի յետ ծռեց:

Նա գնում եր կամացուկ, կծկված ու վոտները գետնին ելին կպչում առանց ձայն հանելու:

Այսպես, մինչև դլուղից դուրս յեկավ: Իսկ յերբ բավականին հեռացավ, սիրտն աստղալից յերկնքի նման բացվեց ու «յերանելի» մըտքերը նորից կյանք առան:

Գիմացի բլուրներն ու պուրակները, վոնց վոր քաղաքի թաղեր լինեյին, քարաշեն, թիթեղածածկ ու ներկված տներով:

Ահա, են ավելի բարձրը, վոնց վոր իրա պաշտոնատեղին լինի, իսկ են մեկն ել՝ «պրաթեկտորի շենքն ա դաթի»:

Լուսինն ել՝ մազերը կտրած կոմյերիտուհի լիներ ասես, վոր ծովել ու քաղցրորեն ժպտում եր Արտոյին:

— «Լաղաթ... կյանքը ե՛ս ա, ե՛ս... համա վո՛նց ազատվեցի...»

Արո ապու քույաչը հանդում մնաց ու հողըն ել անտեր: Մինուճար վորդին չկա՛ր ու չկա՛ր:

Ո՞վ պիտի նրա հոգսը քաշեր, ո՞վ պիտի մտածեր նրանց քույաչը հավաքելու մասին:

Յերկա՛ր միտք արին մարդն ու կնիկը, ապին յերկա՛ր որորեց ծեր գլուխը, նա յերկար և համառորեն թաղրեհի հատիկների մեջ վորոնեց իր բաղդը, բայց ճար չեղավ:

— Ելի հույս Գարսեան աղի վրին ա՛յ ա՛յ

կնիկ, ասըմ եմ, դնամ նրա վրտն ընկնեմ, բալի մի իլլաջ անի. եսքան տարի նրա աղն ու հացն եմ կերել, նա եդ աղն ու հացը հարամ չի անի:

Կնիկն ի՞նչ կարող եր ասել: Դրանից լայ միջոց դժվար թե նա յեղ մտածեր:

Հաստ ու վրտտոտ ձեռնափայտին հենված ապին բռնեց Գարսևան աղի տան ճանապարհը:

— Բարաջողում, Գարսևան աղա, — կամացուկ ու վախկոտ տոնով կմկմաց Արո ապին, և յեկեղեցու սլատի տակին վողորմություն խնդրողի նման, կուչ յեկավ դռան յետև:

— Աստծու բարին, հ՞ը, խե՛ր ըլի, ի՞նչ կա, — խանչալների նման կեռ բեխերի տակից, մոմուաց Գարսևան աղան հարցական հայացքը դեպի նա վոլորելով:

— Խերը՝ խե՛ր ա, Գարսևան աղա, խե՛ր չելած, դհա ինչ կարող ա ըլել:

— Հ՛ը, ասա՛, բանն ընչո՞ւմն ա...

— Աղա՛ ջան, ելի քո նոքարն եմ, քո վրտի տակի Փողն եմ... Քուլաչս հանդումն ա մնացել, բեջարող չկա: Տղես փախել ա, ասըմ են քաղաք ա դնացել: Հիմի մաթալ եմ մնացել. հուլյս մենակ քո վրին ա, բալի մի իլլաջ անես:

— Բա՛... փուչ ժառանգն ել ըտենց կլնի, բերնին մի արչին լիզու ունի, վոր խոսացնես ել — «կուլակ ես» կասի, հերն ել հո կուլակ չե՞ր, խի եդ որին դցեց: Ե՛հ... աչխարքը քանդվել ա, ել վոնչ մենծն են ճանաչում, վոնչ պուճուրը... Աստվածն ա, վոր համբերում ա, յես ըլեյի, չեյի համբերի... Նստի՛, նստի՛,

Արո ապեր, նստի՛, հալբաթ մի ճար կանենք — վրա բերեց Գարսևան աղեն միբուքը շոյելով:

Թշվառությունն ու անդորությունն եր մարմնացել Արո ապու աչքերում: Որորելով ծեք դլուխը, նա անխոս կուչ յեկավ թախտի մի ծայրին:

— Հախն ել ինչ ա կտանաս, Գարսևան աղա — լուությունը խզեց ապին:

— Հախս վո՞րն ա, մի լավություն ա, կանենք ելի՛, յես քո ամազը չեմ մոռացել: Դու յես, վոր հեչ չես հիշում, հեչ տունս ել չես գալիս, լայեղ ել չես անում հետս խոսաս: Ըտենց ա, բա՛՛ հիմի մենծ մարդ ես դառել, ժողովներ ես գնում, ո՞վ ա իմանում ընդիարենք ընչեր ես խոսում իմ մասին: Գյուղխորհուրդը ընտրելիս ել արածս լավությունները մտքիցդ ընկնում են և ինձ թողած, գող ու անամոթ բատրակներին ես մատ տնկում: Վո՞նց ա, խի՞ չես քո ընտրած բատրակների կշտին գնում, թող ոգնեն ե՛՛... բա՛, ըտենց բաներ կան Արո՛ ապեր:

— Դրուտ ես ասում, աղա՛ ջան, ըստուց դենն ել դալաթ եմ արել: Համա դու մեր գործիցը խոսա, մի իլլաջ արա, արևիդ դուրբան:

— Արո ապեր, հիմի հո գիտես ինչ վախտ ա, կալի լավ ժամանակն ա, հմի հերն ըսկի իր աղին տալարը չի տալիս, համա յես՝ հոժարությամբ իմ վրին եմ վե կայնում քուլաչդ կրելն ու ծեծելը... համա, պայմանով վոր մասուրը կխենք:

60576-67



Մտածեց Արո ապին, յերկար մտածեց,
մտքում հաշիւեց, չափեց, ձևեց ու դժկամու-
թյամբ վրա բերեց—

— Թող քո խոսքն ըլնի, Գարսեան աղա...

— Եղ ել վոր անում եմ, քեզ հմար ա, յես
քու դուլլուզը չեմ մոռացել, թե ուրիշն ըլներ,
իրեք փայն ել վոր տար, ուզի չեյի լինի—հա-
մողիչ տոնով ծոր տվեց Գարսեան աղան:

— Ապրեն վորդիքդ, աղա՛ ջան...

— Բա՛, հո յես ել քո «կոնսոմոլ» աղի պես
անջիդյար չեմ: Խե՛ղճ մարդ...

— Ե՛՛՛՛՛՛՛՛...

— Ապեր, ասում եմ արի մի ուրիշ բազար
ել անենք. յես գիտամ, դու ել արտդ բեջարողը
չես, վոչ մալ ունես, վոչ ել Վաշխատող ձեռք.
աղեդ ել զաթի քաղաքից յետ եկողը չի՛ փուչ
ըլնի ըտենց բեղովյաթ ժառանգը հա՛... Ասում
եմ արի, հողդ ել ինձ աուր իջարով ու դու հե-
ռու կաղնի քեզ համար, մի բան, վոր հմի հո-
ղըս քիչ ա և մալ տավար ել ունեմ փառք աստ-
ծու...

— Եղ ել լավ ես ասում, աղա՛ ջան, հա-
մա... պայմանն ի՞նչ ա...

— Դու գիտաս, վորք յես քեզ ուրիշի վոտի
չե՛մ տանի, յես քու ամադդ չեմ մոռացել, քե-
զանից մի բան ել պակաս կը վեկայնեմ: Խալ-
խը ինքն երկուսն ա վե կալնում, մեկը տիրոջ
տալիս, համա յես խղճով բան կբռնեմ, կե-
սը ինձ, կեսը՝ քեզ: Սերմը կառնենք կիսովի,

հողը քեզանից, մալն ու աշխատանքն ել՝ ին-
ձանից:

— Դժար ա, աղա՛ ջան, դժար, — կամաց
ձայնով վրա բերեց Արո ապին, հաստ բեխերի
տակից:

— Դու գիտաս, յես հլա քեզ պակաս ասի,
կարող ա ինքդ ես ուզում հողդ բեջարել, դնա,
բեջարի, յես ավելի ուրախ կլինեմ, — խոսակ-
ցությանը մտերմական շեշտ տալով, շարունա
կեց Գարսեան աղան:

Նա գիտեր, թե ո՞ւր եր ուղղում իր սլաք-
ները:

Մի ձեռքը քունքին՝ յերկա՛ր միտք արեց
Արո ապին և իր մահավճիռն ստորագրողի
դառնությամբ ու խնդրությամբ վրա բերեց—

— Լա՛վ, աղա՛ ջան, եղ ել քո խոսքն ըլ-
նի... համա... պայմանը յե՛փ կապենք:

— Պայմանս վորն ա, իմ խոսքը քեզ պայ-
ման: Բա ամոթ չի գլխիս գդակին ու ես բե-
խերի հմա՞ր... Մենք մեր մեջը հաշիվը կը
թամզենք, թե չե, դրսում, ամեն շուն-չանդալ
պտի իմանա ու մեջ խառնվի...

Նա ամուր բռնելով Արո ապու ձեռքը մի
քանի անգամ թափ տվեց ու խորամանկ ժպի-
տով վրա բերեց.—

— Խե՛ր տենաս...

Ողու բաժակները հաստատեցին պայմանը
և Արո ապին իր միակ նեցուկ ձեռնափայտին
հենվելով, համբաքայլ հեռացավ «բարեբարի»
տնից:

Վորդու բացակայութիւնը նոր միայն
ծանր թվաց նրան:

Նրան թվաց, վոր Գարսեան աղի տանը
կորցրել էր վորդուցն ավելի թանկագին մի
զանձ...

Աչունը դեղին էր ներկել գյուղի զույգ
բարդիներէ կատարները:

Հանդի կանաչ խալիչի գույնն էլ թուել էր
յերեսից:

Մոտակա պուրակի ծառերն ու թփերը
վոսկեկարմիր գույնների մեջ վառվում էին:
Տեղ-տեղ բրոնզագույն տեղ-տեղ վոսկեգույն,
տեղ-տեղ ծիրանի, փովել էր պուրակը մանի
շակագույն ու բաց կապույտ լեռների ֆոնի
վրա:

Պուրակում մեկ-մեկ նկատվող, վառ կար-
մրին տվող ծառերը՝ դրոշակներ լինեցին ասես,
վորոնց շուրջը խմբված, վոնց վոր թե ցույց
եցին սարքում յարեւոյան այլատարր ու այլա-
տարազ ժողովուրդները:

Աչնանային քամին հո՛ւ անելով պուկ էր
գալիս դեմի ցորնագույն սարի կատարից և
հարձակվում կտուրներին նստած խոտադեզե-
րի վրա:

Յերբեմն էլ գազազում էր նա, գյուղի շնե-
րի նման:

Հարձակվելով բազկատարած ու անոզնա-

կան գյուղի վրա, նա ծեծում ու բզկտում եր
խրճիթների փափախները: Իրար խառնում ցած
լիկ խրճիթները և ծուռ ու մուռ փողոցները:

Հանդիմանութեան համար ասես, հալա-
քում եր փողոցների աղբն ու փոշին և Չղայնու
թյամբ ներս չպրտում բաց դռներին, նեղլիկ
պատուհաններից ու յերկնահաս յերթիկնե-
րից: Ապա հանդարտորեն շոյելով հանդիպա-
կաց բլուրների ճղատ գաղաթները, հեռա-
նում կորչում եր մոխրագույն անհունում:

Գոմեշները՝ միտրինակ ու հայկական գյու-
ղին հատուկ դանդաղությամբ, քաշ եյին տա-
լիս ճոնջացող վերջին յերկանիվ սայլը, հանդի
վերջին բարիքովը բեռնավորված:

Մանկահասակ աղջիկները մոտակա պու-
րակից պարկեցրով լի կրում եյին գետին թափ-
վող վոսկեկարմիր տերեւները՝ թոնիրներում
վառելու համար:

Աշնանային գյուղն աշխույժ եր ու յեռուն:

Պատերի տակ, ժամի բակում, գյուղի
«մեյդան» — ում, խումբ-խումբ հավաքվել,
չըջան եյին կազմել, բեխալոր, թե անբեխ,
մեծ թե փոքր գյուղացիները և ամբողջ ուշա-
դրությունը բեռեւ վեզի ջորս կողմերին:

Մի տեղ վեդերն եյին չըխչըխկում, մի այլ
տեղ ընկույզի հարյուրավոր հարվածներ եյին
տեղում հողի յերեսին տնկված 10 կոպեկանոց
արծաթի շուրջը:

Վեզի ու ընկույզի հետ՝ կենդանի խոսակ-
ցությունն եր փռվել փողոցներում, բաղմատե

սակ ու յերբեմն դեռ նորահյուս հայհոյանք-
ներով համեմված:

Իսկ յերեկոյան, դոմերում ու ողաներում
Շահ—Իսմայիլի, Լեյլի—Մեջնունի և Աշուղ
Ղարիրի հեքյաթներն եյին կարկաչում, իսկ
խրճիթ—ընթերցարանում, սևով նախած թղթի
վրա կռացած, բատրակը բռուեր եր քանդում,
վոնց արորը՝ կորթ հողը:

Նման որերից մեկն եր:

Ձիերն ասարանդակելով և յետեվից փոշու-
թանձր ամպ թողնելով, գյուղ հասան յերկու
կոմ յերիտականներ՝ բերքի տոնի կամպանիան
յանց կացնելու համար:

Դեռ գյուղը չմտած, ճամբեղրին նրանք
հանդիպեցին մամռոտ մի քարի կողքին պըպը-
պած ծեր մի գյուղացու:

— Բարաջողո՛ւմ, բիճա...

— Աստու իւեր բարին: Ումուտ ջա՛ն, գիտեմ
քաղաքից եք գալիս, յես ձեր եկած ճամբին
դուրբան, բա քաղաքում իմ Արտոյին տեսա՞ք
վոչ:

— Բիճա՛ ջան, չենք ճանաչում:

— Վո՞նց չեք ճնաչում, ախր նա յել ձեզ
նման դոշին նշան ուներ, ու «պիլին» եր: Եր-
կու ամիս ա ինչ քաղաք ա գնացել, համա հեչ
ջուղար չունեմ. աչքս ճամբին ջուր դառավ.
ամեն որ ես քարի կշտին պըպղած, թամաչ եմ
անում, վոր մի լավ ճամբորդ, ձեզանից լավը
չլի, մի բարի խաբար բերի իմ Արտոյից: Մեկ-
մեկ ել միտք եմ անում, թե վե կենամ քաղաք

գնամ, համա ես անտեր վոտները հետս չեն
զալիս:

— Ինչո՞ւ յե քաղաք գնացել բիձա՛:

— Գնացել ա վոր կարդա, մարդ դառնա,
յես ի՛մ...

Ձիավորները. տարակուսանքով իրար յե-
քես նայեցին ու շուտ տվին ձիերի գլուխները:

— Ումո՛ւտ ջան, ել յետ քաղաք գնալիս,
թե կը տենաք իմ Արտոյին, ասեք թող թեզ
հասնի իր հոր հավարին. ասեք վոր կովը ծա-
խել եմ, արտն ել տվել Գարսեան աղին, — ա-
ղիողորմ տոնով ասաց Արո ապին նրանց հե-
տեվից: Նրա ջրակայած աչքերից արցունքի
յերկու կաթիլներ իջան ցցված այտոսկրերի
վրայով ու թաղվեցին թավ միրուքի մեջ:

Արո ապին դեռ յերկա՛ր նայում եր ձիա-
վորների հետևից:

4

Այնտեղ, ուր իրար խաչաձևում և ան-
կյուններ եյին կազմում քաղաքի յերկու բա-
նուկ փողոցները, հենց այդ անկյուններից մե-
կի մի հարկանի տան մեջ, տեղավորված եր
Կոմյերիտմիության գավառային կոմիտեն:

Նրա մեջտեղի մեծ սենյակը, ուր իրար
դեմ-դեմի դրված եյին մի քանի սեղաններ՝
նոր բացված կոոպերատիվի նման բան, միշտ
լի յեր հաճախորդներով:

Սենյակը համեստ եր ու հասարակ:

Պատերին նկարներ.—

Լեռնն,

Ստալին,

Մարքս,

Մյասնիկյան:

Պատերին փակցված եյին կոշտ տառերով
սպված պլակատներ.—

ԲԱՐՁՐ ԶԽՈՍԵԼ

ԳՈՐԾԴ ՎԵՐՋԱՅՐԻՐ, ԳԼԱ

և այլն:

Միալար ու անխուսափելի հնչում եր գրամեքենայի չխչխկոցը:

Այդ նույն սենյակում բացվող դեմի դռանը, յերկարավուն ու սպիտակ ներկած թիթեղի վրա, կարմիր տառերով փայլում եր.—

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ներսում, թեք դրված սեղանի մոտ, գլուխը թղթի կույտի վրա ծռած մի յերխտասարդ, քրքրում, կարգում, վերցնում գրեչը, քիչ մտածում, ու ապա թղթի մի անկյունին, ծուռ կերպով ինչ վոր բաներ եր մակնագրում:

Նրա բարակ քիթն ավելի յեր դուրս ցցվել վոսկրոտ այտերից:

Ներս ընկած աչքի խոռոչներում փայլում էյին սև ու շարժուն բիբերը, վորոնք ավելի էյին վառվում, յերբ նա բարկանում եր:

Իսկ այդ հաճախ եր պատահում:

Գալիս էյին ամեն որ նույն մարդիկ, նույն խոսակցությունները և նույն պահանջները:

— Հընկեր քարտուղա՛ր, գործազուրկ մեռանք ե՛...:

— Ընկեր քարտուղա՛ր, սենյակս փուլ յեկավ, դուրսն եմ մնացել:

— Ինձ աշխատանքից կրճատեցին:

— Յեղբարս դպրոց չեն ընդունում:

Յեվ այսպես անվերջ:

Շատերը խոսք չէյին հասկանում, համառում էյին, ու «հընկեր քարտուղարի» աչքերի սպիտակում շողացող ածուխի կտորները վառվել էյին սկսում:

Արտոն ել պատվալոր տեղ եր բռնել նրա հաճախորդների շարքում:

Գալիս եր: Կամացուկ բացում դուռը, դեռ դռան մոտից հանում կարկատած կեպին, ավելի ցրցում մեծ ականջները, խոնարհաբար բարեփում ու անխոս, պահակի նման ձեռները կողքերին, կանգնում եր սեղանի մի կողմը:

— Դեռ դու եստե՞ղ ես, դեռ գյուղ չգնացի՞ր:

— Ախրը գյուղ գնալով բան չի՞ դառնա, հրկիք քարտուղար, մի գործ տուր ապրենք ու քո երեսից մարդ դառնանք... ըսենց անգործ մեռանք ե՛... — կամացուկ թոթովում եր նա, ավելի շեշտելով «հընկեր» բառը:

— Յես քեզ վաղուց եմ ասել, վոր գործ չունենք, թող գյուղ գնա ու տնտեսությանդ մեջ աշխատիր:

— Բա վո՞նց պտի ըլնի մեր ճարը, բա մենք ուսում չսխտի՞ անենք, բա մենք չստի՞ լուսավորվենք, հա ըսենց մութ ու խավա՞ր պտի մնանք... ես ա ձեր «իրեսներս դբա գյուղ» լոնդունգը:

— Հմի վո՞նց անենք քեզ հետ, յես քեզ ի՞նչբան ասի թող, գյուղ գնա ու գյուղյերիտ—

դպրոցումն ել սովորի, բայց դու լայեղ չես
անում: Թե «յերեսներս դեպի գյուղ» ասելով
հասկանանք, վոր գյուղի կոմյերիտականներին
քաղաք պիտի բերենք ու պաշտոնների դնենք,
բա գյուղումն ել ո՞վ պիտի տարածի կուսակ-
ցության ու խորհրդային իշխանության գա-
ղափարները:

— Հը՛մ, — վրա բերեց Արտոն: Պատաս-
խան գտնելը՝ դժվար եր:

Ամեն ոք եր գալիս նա, ամեն ոք դանդատ-
վում ու ամեն ոք գլխիկոր հեռանում...:



Յերկու ամիս շուռ եր յեկել արդեն:

Արտոն դեռ անգործ թափառում եր քաղա-
քում: Վորովհետև քարտուղարն ելի նույն
մերժողական պատասխաններն եր տալիս, հի-
մա ինքն եր մտածում իր գլխի ճարը տեսնել:

Նա ինքն եր ամբողջ ուրը չըջում. հիմնար-
կից-հիմնարկ ու գործ փնտռում:

Յերեկները չըջում եր փողոցները, իսկ դի-
շերները՝ կուչ յեկած, քնում եր գյուղացու
տան բակում: Իայց դեռ յեղանակը տաք եր,
իսկ թե ձմեռն ել դրությունը շարունակվե-
ր՝ ոչ կլիներ նրա ճարը:

Փոխոգնության դրամարկից տրված կո-
պեկները փոր չեյին կշտացնում:

Հիմնարկությունները միշտ միևնույն
մերժողական պատասխանն եյին տալիս, իսկ

քարտուղարն ել՝ «մի կողի ընկած», գոռում եր
թե՛ գյուղ գնա:

Ի՞նչ աներ Արտոն: Թողներ գյո՞ւղ գնար:
Ի՞նչպես գնար: Իսկ իր հեռանկարները: Չե՞
վոր գյուղում բոլորը կը ծիծաղեյին, յերես-
տվանք կանեյին: «Սլնքոտ Սաչոն» ու «Չո-
փուր Սարոն» կսկսեյին ձեռք առնել «քաղքցի»
Արտոյին:

Իա ի՞նչ եր լինելու սրա վերջը:

Դռնից ներս մտնելիս, հետ-հետ քաշված սեղանները ճամբա ելին բացում հեպի տրեստի նախադասի առանձնասենյակը:

Առանձնասենյակի պատերն այնքան մոտ ելին իրար, վոր յեթե մարդ անզգուշարար յերկու քայլ առաջ դնար, պատին կարող եր խփվել:

Հասարակ ու չոր աթոռի առաջ չոքած նույնքան հասարակ սեղանը, գրասեղան եր հիշեցնում այնքանով, վորքանով նրա մի անկյունում ընկել եր փոքրիկ թանաքամանը, մածուցիկ ու բավական պինդ մի հեղուկ մեջը լերդացած: Իսկ դա յել հիշեցնում եր, վոր թանաքամանում մի ժամանակ թանաք ե լըցված յեղել, բայց անցել են ամիսներ, թանաքը կամաց-կամաց շոգիացել ե, փոշին իջել, նստել ե նրա մեջ և հետզհետե մերել այն, պնդացրել: Փոշին մի նուրբ սիւռոց ել սեղանի յերեսին եր փռել, վորի միապաղաղությունը տեղ-տեղ խանդավրվել եր ինչ վոր մատների ու ձեռների դրոշմներով: Թանաքամանից քիչ հեռու, խռովածի նման, պոչը քաշել ու ընկել եր

զրչակոթը, վորի ծայրի յերկու մասերն իրար վրա հեծած, կարծես սպառնում ելին այլևս վոչինչ չանել, յեթե դեպի իրենց ցուցադրվող անտարբեր վերաբերմունքը չփոխվեր:

Առանձնասենյակի խորքում, բարձր դարակի գլխին, փոշու գորշ ու թափանցիկ քողով ծածկված, ընկել եր Լենինի կիսանդրին, մի քանի «գործ»-երով ու գրքերով շրջապատված:

Սակայն, Սանթրոսյանին բոլորովին փուլթ չեր թե թանաքը մերվել ե, զրչակոթը՝ ծայրը ծայրին հեծցրած գործադուլ ե արել, կամ թե Լենինի կիսանդրին փոշուովել ե:

Առաջինների կարիքը նա հազվադեպ եր զգում, իսկ Լենինն ել՝ իր սրտումն եր քանդակված և վոչ թե այդ գածի մեջ:

Յերբ նրան հարկավոր եր լինում ներկայացրած գրության վրա մակագրել՝ «բաց քողնալ» կամ «ուկքուկել», վերցնում եր զրչակոթը, բութ մատի յեղունկի վրա փորձում մի կերպ ուղղել նրա՝ իրար վրա հեծած ծայրերը, թաթախում մածուցիկ հեղուկի մեջ, ապա՝ բթամատի ու ցուցամատի յեղունկներով մաքրում ծայրից կախված մազն ու լերդացած փոշին, և հաստ անհամաչափ գծերով խաղմզում հեղինակավոր մակագրությունը: Իսկ յեթե այս արարողությունը շատ ձգձգվեր, կամ զրչակոթը համառորեն պնդեր իր «գործադուլի» վրա՝ ծայրերը չբմխացնելով, նա ջղայնությամբ դեն եր շրպր-

տում գրչակոթը՝ «քու տիրոջ հերն ել անի-
ծած» ուղերձով, գրպանից հանում բթածայր
քիմիական մատիտը, լեզվով ու շրթունքնե-
րով թրջում, բերանում թողնելով անհաճելի
մի համ և մակագրումն ավարտում:

Սանթրոսյանը գրչի կամ մատիտի կարի-
քըն զգում էր յերբ մակագրումներ էր անում,
իսկ յեթե գրանք էլ հնարավոր լինեյին անել
մտավոր կերպով, ապա ընթերցողը նրա սե-
ղանի վրա վոչ բորբոսնած թանաքաման կը
գտներ և վոչ էլ «գործադուլավոր» գրիչ:

Իր ամբողջ հաշիվները նա մտքումն էր
անում և մատների ոգնությամբ:

Նրա ուղեղում պառկած կային և՛ մայր
մատյանը, և՛ «բալանսները», և՛ պարտքերի
մատյանները, և վերջապե՛ս, ամբողջ գրա-
սենյակային մի արխիվ:

Ամեն առավոտ, գրասենյակ մտնելիս, նա
հիշում էր, թե այդ որը վո՞ր պարտատերերին
պիտի այցելի և ինչպիսի անակնկալներով
կամ քաղցր հիշոցներով պիտի դիմավորի նը-
րանց: Յերբեմն էլ նա հեռախոսի յարերովն էր
հաղորդակից դարձնում այդ հիշոցներն ու
բարկությունը՝ անպարտաճանչ պատվիրա-
տուներին:



Սանթրոսյանը վաթսուներե մոտ էր: Կար-
ճահասակ, կլոր դեմքով:

Հին բանվոր էր, կոփված բանվորական

չարթումների ու մի շարք հայտնի դործադուլ-
ների մեջ:

Նրա աչքերում՝ խորամանկությունն էր
ամբարված, իսկ սրածայր կարճ միջուկից՝
կախվել էր առաքինությունը:

Տարիներն ակոսներ էյին շարել ճակատին
ու հղկել, վառվող փայլ տվել գանգին:

Բանվորների մտեղմական հավաքույթում,
մի պոետ այսպես գրեց Սանթրոսյանի մա-
սին. —

Միք նայի գլխիս քաջալ,
Միրուքիս ծուռ ու կնտած,
Թե ուզեմ կը դառնամ խանչալ —
Ամենքի ջանին ընկած:



Արտոն արդեն յերրորդ անգամն էր, ինչ
Սանթրոսյանի գրասենյակն էր գալիս:

— Հնկեր Սանթրոսյան, Կոմիտեն ասըմ
էր թե ձեզ մոտ աչակերտի տեղ կա:

— Ե՛հ, Կոմիտեն էլ գլխներս տարավ, և-
լի՛: Մի գլուխ գրում ա՝ սրան ունթունի,
նրան ունթունի, յեսով էլ կարգադրում թե՛
բրոն ունթունի: Դու բրո՞ն ես:

— Ձե յես աղքատ գյուղացի յեմ, հընկեր
Սանթրոսյան — վրա բերեց Արտոն, չիմանա-
լով թե «բրոնն» ինչ բան է:

— Եդ իմ վեջը չի թե գյուղացի յես, կամ
քաղաքացի, բրո՞ն ես թե չե, դու եդ ասա:

— Բրոնը չեմ գիդում ինչ ա:

— Լավ, քանի՞ տարեկան ես:

— Քսա՛ն:

— Ե՛հ, եչի թա՛յ ես, բրոն ել չես, ուն-
թունել չեմ կարող: Որինակի համա թե բրոն
ըլեյիր, ելի մի բան կանեյինք:

Արտոն հեռացավ գլխիկոր: Նա մտքում
իրեն հանդիմանում եր, թե ինչո՞ւ առաջին
հարցին չպատասխանեց— «հրամանք ես, հըն-
կեր Սանթրոսյան, բրոն եմ»: «Թե բրոն ըլե-
յիր, ելի մի բան կանեյինք»— այդպես ասեց
Սանթրոսյանը:

Բայց Արտոն Սանթրոսյանից ավելի պըն-
դերես դուրս յեկավ. այնքան գնաց յեկավ,
այնքան հայհոյանք կերավ, բայց չընկճվեց,
և գուցե նրա այդ պնդերեսուլթյունն ու ան-
դըրդվելիությունը Սանթրոսյանին համոզե-
ցին, վոր այդ գյուղացի յերիտասարդից լավ
բանվոր դուրս կը գար:

Դրա համար ել, մի որ նա Արտոյի ներ-
կայացրած դիմումի վրա մակագրեց.—

«Ունթունել»:

Այդ գրասենյակի դուռը փակելով, ըստ
սովորականի սկսեց նրա «փեչը քաշել» (խրա-
տեկ հասկացիր, ընթերցող, ըստ Սանթրոսյանի
բառարանի):

— Խեղը գլխիդ հավաքի, բան սովորի:
Որինակի համա կոմսոմոլները շատ են սիրում
«ըստ էյության», «ըստ կարգի» խոսալ, նրանց

աչք չտաս գլուխդ քաշ արա ու քեզ համա աչ-
խատիր:

«Փեչը քաշելու» արարողությունն ավար-
տելուց հետո, Արտոն ուրախ-ուրախ վերցրեց
հեղինակավոր մակագրությամբ դրոշմված իր
դիմումը և գլխաբաց, ականջները դուրս ցը-
ցած, խորին շնորհակալությամբ ու յերախ-
տագիտությամբ շոյելով Սանթրոսյանի սիր-
տը, դեպի գործարան շտապեց, ուր նրա ա-
ռաջ բացվեց մի նոր աշխարհ:

Յերբ Արտոն դործարան մտավ, բանվորները դազգայահների ու մեքենաների շուրջը թափված նախաճաշում եյին:

Այնպիսի յեռանդով ու ազահուլթյամբ եյին կրծում նրանք մրտա ձեռներում բռնած հացը, պանիրն ու յերշիկը, վոր ասես չարաթնեբով հաց չեյին կերել, կամ «սովից եյին պրծեը», վոնց վոր ժողովուրդն և ասում:

«Յեզին հաց ուտողը՝ յեզին ել դործ կանի», այդպես եր ասում Արտոյի հայրը: Այդպես ել մտածեց Արտոն, յերբ կամացուկ ու սամաչկոտ նրանց բարեկերուց հետո, քաջվեց ու կանգնեց մի պատի տակ:

«Թե վոր եդ ուտելուն դյորա յել՝ յեզին բանեն, համա վայն եկել ա իմ որին, դժար թե դրանց հետ գլուխ հանեմ» մտածում եր Արտոն, յերբ բանվորներից մի քանիսը հարցական հայայքներով դեպի նրան դարձան:

Բայց ինչքան ուրախ եյին նրանք, «Ասես աշխարհի յերեսին հեչ դարդ չունեյին»:

Մի կողմից ուտում, մյուս կողմից խոսում, կատակում, հոհում եյին:

— «Յերանի դրանց...»

Յերիտասարդ բանվորներից մեկը թեյի բաժակը ձեռքին, մեջտեղում կանգնած «Ութելո» յեր խաղում.—

— «Յեթե իմանամ վայրենացել ես իմ թռչնակ, բայց կանեմ վանդակի դռնե՛րը... վանդակի դռնե՛րը...»:

Չեղավ: Գլուխ չեկավ: Հուշարար չկա: Ապա իսկույն շուռ տվեց —

— «Ազլի Ուստյա՛ն, մե ես ճանճեբը քչի յե՛ե՛ե՛... եդ ել յես անե՛ե՛ե՛մ...»:

Յերիտասարդները հոհում ու ծափահարում եյին. իսկ հասակավորներն՝ ինքնապարբ ժպիտով նրանց եյին նայում, յերևի ամեն մեկն իր յերիտասարդութունը մտաբերելով:

Բայց կատակի ու «ներկայացման» հետ միասին, նրանք լավ դաղել ել դիտեյին: Բավական ե վոր մի վատ բան արիր, մի «աղատ» ունեցար, ենքան «ձեռք առնեյին», ենքան ծիծաղեյին, ենքան խարազանեյին, վոր չվարեյիր ու անկարող լինեյիր պատասխան տալ:

Միշտ ել «քավության նոխազը» Մեդրակն ու Արսենն եյին դառնում:

Սրանցից առաջինը՝ գյուղում խոզեր ուներ պահ տված, իսկ յերկրորդը՝ քաղաքում այգի ուներ ու մի կով:

Մեկ ել տեսար, յերբ «Ութելոն» կամ «քաջ Նազարը» վերջացավ, խոսքը մեկ արած սկսեցին—

(Թեկուղ ձմեռվա կեսին)

— Արսե՛ն վո՞նց ա, հաղողը հասե՞լ ա...
 — Մաճառի վեղբոն քանի՞ սով ես տա-
 լիս...
 — Ասում են Արսենը միկիտան ա բացե-
 լու և բաղի մաճառը ինքն ա ծախելու:
 — Համա, տղի բաները փիս ա, ասում են
 հերվա գինին քացախել ա...
 — Տղի մերը չմեռնի, դայդեն գիզա, հե-
 տը ջուր կխառնի կծախի:
 — Խաղողը չուր սովե՛լ ա...
 — Խեղճ տղա, քուլֆաթը սովից կտոր-
 վելու յե, հա՛...
 — Կովին ջանը վողջ մնա ջանքմ, դուն
 հոգ մի ըներ Արսեն:
 — Արսեն կովի ապահովագրի, սատկե-
 լիս՝ Պետապից ելի կչիես, հա՛...
 — Ասում են Արսենն ըստարի միասհարկը
 չի սովե, Ուֆոն ել բաղը գավթի պտի:
 — Ինչ կսե՛... թափա կը ֆուռացնենք, այ
 ողուլ, եղիկ վոր որվա բանվորական իշխանու-
 թյունն ե՛, վոր բանվորին աջլամիչ ենեն:
 — Ուֆոն ինչ իրավունքով ե կպչում բան-
 վոր դասակարգի շահերին:
 — Կեցցե բանվոր դասակարգի բազման-
 չին, կեցցե՛...
 — Յերեսներս դեպի գյուղ: Յերեսներս
 դեպի խոզերը...
 — Սեղբակին աչե, տեսնե՞ս դը, քեֆն ե-
 կա՛վ... խոզերի խորաթեն երի՛ն...

— Ասում են ես տարի ամեն մի խողը քսան
 ճուտ ա բերել...
 — Հա՛յ, հա՛յ, շան տղի տղեն կուլակ ա
 դառնալու հա՛...
 — Համա կասեն հըմեն մի խողից խինգ
 մանեթ նալոյ կառնեն...
 — Իրանից հո չի քինալու, տրեստիցն ա
 քիյնալական:
 — Իհարկե տրեստը սաղ մնա, մեկ ել տե-
 սար, մի հարյուր մանեթ ավանս բաց թողեց
 Սեղբակին... Պետք ե բանվորի դրուժյան մեջ
 մտնե՞լ, թե չե՛...
 — Հարկա՛վ, հարկա՛վ...
 — Մա՛չ...
 — Յերեսներս դեպի գյուղ...
 — Յերեսներս դեպի խոզերը...
 Ու մի քանի հոգի հոհուալով, վրա տա-
 լով, գրկում եյին Սեղբակին և սկսում քաչ-
 քշել:



Բանվորներն ուրախությամբ և մեծ աղ-
 մուկով խոսում ու նախաճաշում եյին:
 Արտոն չվարած ու մտամոլոր, պատի
 սակ կանգնած, կրծում եր յեղունդները...

Վոնց վոր մի քանի որ գնացքով ճանապարհորդող ուղեւորը վերջին որն, յերբ նպատակադրած քաղաքին ե մտանում, սկսում ե սահամբեր ներս ու դուրս անել, պատուհանից նայել, նստել, նորից կանգնել, և ինչպես ժամանակը ծանր ու դանդաղ ե սահում նրա համար, այդպես ել, Արտոյի համար այդ որը մեծ դժվարությամբ անցավ գործարանում:

Վոնց վոր ոտարության մեջ ընկած լիներ նա:

Ոտարության, վորի վերադարձի բոլոր ճանապարհներն ասես փակված եյին անանցանելի պարիսպներով:

Շրջապատում ամեն ինչ խորթ եր, ոտար:

Նա մեծ մտավախությամբ եր նայում հակայական մեքենաներին, վորոնք ելեքտրական կոճակի մի փոքրիկ հպումից՝ մոռնալ եյին սկսում ու սպառնում կարծես կտոր-կտոր անել մոտ յեկողին:

«Վոնց ել ռիսկ են անում, վոնց ել չեն վախենում դրս վրին կաղնողները» — մտածում եր Արտոն նույն մտավախությամբ:

Սակայն նրանք վոչ միայն Արտոյի նման

չեյին զարդանդում, այլ մինչև անգամ մեքենայի ռիթմի հետ յերգեր եյին յերգում:

«Ձե Արտո՛, ես մեկը քո բանը չի, հանդում մանդաղը ձեռքիդ վրա թե պրծներ, մի քիչ տեղ պիտի պլոկեր, համա թե եդ անաստված մաշինը վրա պրծավ, կորս՛ր, մենձ բըրդուճը՝ ախանջդ ա մնալու...»

Յերկրորդ ու յերրորդ որերն ել ծանր անցան:

Արտոն անհամբեր միշտ անցնում եր գործարանի դրասենյակի առջևով և աչքի ճոթով, թաքուն, ժամացույցին եր նայում, թե՛ քանի ժամ կա դեռ, կամ յերբ կգա «չարաչի» ժամանակը:

Ժամերը ծանր եյին սահում: Վարպետ Նրիկողոսն ել՝ Արտոյին դուր չեր գալիս: Պոչավոր ակնոցների տակից, աչքերը չոած, նա անդադար մտիկ եր տալիս, թե ո՞ւր ե գնում, կամ ի՞նչ ե անում Արտոն:

«Ես ինչ գերություն ա ախպե՛ր — մտածում եր Արտոն, — թամամ վոր գերություն... ընենց ա վարավորդ անում, ընենց ա թամաչ անում, վոր չես ել կարում վոտաց ճանապարհ գնաս, թո՛ւհ, ես ինչ թարս մարդի ուստ եկանք...»

Վարպետը կամաց-կամաց նրան «լծեր» սկսեց: Յեթե առաջին որերին թողնում եր, վոր Արտոն ման դար գործարանում, մեքենաները դիտեր, ուսումնասիրեր, հիմա արդեն գործի դրեց նրան:

Արտոն ծանրություններ եր փոխադրում,
մեքենաներ մաքրում, յուղում, պտուտակնե-
րը սրբում:

Բայց ելի ժամացույցը չեր մոռացել:

Գրեթե ժամը մի անգամ, կամաց կերպով
նա սողում եր գրասենյակի դռան առաջով ու
աչքի ճոթով տնտղում ժամացույցի սլաքնե-
րը:

— «Հա՛յ, կոտորվե՛ք դուք, հեչ տեղից
ել ժաժ չեն գալիս» — մտածում ե նա, յերբ
նրա կարծած յերեքի փոխարեն, ժամացույցը
մի ժամ եր միայն առաջ գնացել:

Մի որ բանվորները հետաքրքիր մի դեպք
պատմեցին: «Համա ինչ կլնեք, վոր հմի յեւ
ըտենց անե՛լինք...» — մտածեց Արտոն:

Նրանք պատմեցին թե հին ժամանակը
յերբ գործարանը պատկանում եր խաղեյինին,
խաղեր եյին սարքում նրա գլխին: Յերբ նա մի
րոպեյով բացակայում եր գրասենյակից, մեկ
եւ տեսար, բանվորներից մեկը սողաց պատի
վրա ու ժամացույցը մի ժամ, կամ կես ժամ
առաջ տարավ... «Դե, գնա քե՛ք արա...»

Ժամերը ծանր եյին սահում, գործը դըժ-
վար եր, իսկ վարպետ Նիկողոսն ել՝ հեչ Ար-
տոյին դուր չեր գալիս:

Ըստ սովորականին, Սանթրոսյանն առա-
վոտները բանվորների հետ գործարան եր գա-
լիս:

Դեռ բանվոր ժամանակվանից, նա սովո-
րել եր արեւից առաջ վեր կենալ:

Գործարանի զանգը հնչելուց յերկու ժամ
հետո միայն տրեստի գրասենյակի աշխատանք
ներն սկսվում եյին: Սանթրոսյանն այդ յեր-
կու ժամը գործարանում եր անցկացնում:

Գալիս եր, կամ կառավարչի «փեչն եր քա-
շում» կամ տեղկոմի քարտուղարի, կամ թե
գործարանի բաժանմունքներից մեկում՝ վե-
ճի բռնվում բանվորների հետ:

Բաշական եր մեկին տեսներ գործը թողած
ընկերոջ հետ խոսելիս, կամ շրջելիս, իսկույն
վրա կտար.—

— Վո՞նց ա, կատիգորեն բարձրացնելու
վախտը, որինակի համա, իրեքը մի անգա-
մից եք քշում, մի գլուխ վրա յեք տալիս, թե
«պտի տաս», «պտի տաս»... վո՞նց ա, խի յեք
անգալություն անում, որինակի համա, մի որ
ել ասեք թե «պտի տանք» ե՛...:

— Մենք տալիս ենք, ինչ վոր մեր գործն
ա անում ենք, համա դուք հեչ չեք մտածում
մեր ոռճիկի ավելացման մասին: Թիֆլիսում
ասում են մինիմումը 21 ուրլի յա, համա մեզ
մոտ մինիմումը եչի սոչ ա դառել, վոչ յեր-
կարում ա, վոչ կարճանում.— մեջ եր ընկնում
Սեդրակը:

— Քսան-մե՛կ, չե մի բողբա՛շ, ո՞վ ասեց
վոր Թիֆլիսում քսան-մեկ ա... Հնդստա-
նումն ել, որինակի համա, ասում են խոր-

մեն մուֆթա յե... համա՛, որինակի հմա վոչ եդ խուրմեն ենք տեհել վոչ Հընդստանը...

Նման առավոտները նա յերբեմն հագնում էր իր համար պատվիրել տված պահեստի խալաթը և կանգնած իր հին ընկեր, մեքենայի կողքին, սկսում էր աշխատել, կամ թե մեքենայի մասերը քանդել ու բացատրել յերիտասարդ բանվորներին:

— Ձեեկ տղերք եք, խելքներդ գլիններիդ ժողվեք, որինակի համա, «ըստ եյության», «ըստ կարգինը» վերջ տվեք, փեշակ սովորեք: Վորակավորվեցեք, վորակավորվեցեք, մա՛րդ դառեք...

Ինչպես ձուկը ջրում՝ այնպես էլ Սանթրոսյանն ամբողջ որն ու գիշերվա մեծ մասը լող էր տալիս տրեստի գործերում: Չկար նրա համար ավելի հաճելի բան, քան տրեստի հաշիվներն ու գործերը:

— 150 մանեթ կոթորեստից . 100 մանեթ թատրոնի վարիչից... 300 մանեթ «Արարատ»-ից... Թո՛ւհ, են շունչանվորդի Մեխազավոզն եսոր փողը չբերեց — բավական բարձրաձայն խոսելով, ու մատների վրա հաշվելով արագ-արագ կտրում էր նա փողոցները:

Արտոյի ընդունվելուց մի ամիս էր անցել, յերբ մի առավոտ Սանթրոսյանը մոտեցավ վարպետ Նիկողոսին, բարևեց ու —

— Հ՞ը, վոնց ա սրա բանը — վրա բերեց, մատնացույց անելով Արտոյին — մի բան դուրս գալիս ա, թե չե...

Վարպետը դլխով բացասական նշան տվեց: Սանթրոսյանն աչքերը կկոցելով, սկսեց վոտից մինչև գլուխ գննել Արտոյին, կարծես առաջին անգամն էր տեսնում, և նոր էր դործի ընդունում նրան, ապա վարպետ Նիկողոսին, մի կողմ տանելով ականջին փափսաց. —

— Թե կտենաս բանի պետքը չի, պոչը խուղիլ տալ-տու:

Հետո մոտենալով Արտոյին, պատի մոտը տարավ ու սկսեց —

— Ծիտը խաբար ա բերել, վոր շատ ես անգալություն անում: Խելքդ գլխիդ հավաքի, փեշակ սովորի, որինակի համա անգալների պոչը շուտ ա խուղվում. . Վերջը կփոշմանես, հա՛...

Թե՛ վարպետի ականոցների տակից չոած աչքերը և թե՛ տրեստի նախագահի խրատը, վրդովեցրին Արտոյին: Ամբողջ որը նա այդ մասին էր մտածում. —

— «Ես ի՞նչ կյանք ա, ախպեր, ես ի՞նչ որենք ա, քանի՞ խոսացող կա գլխիդ: Չես իմանում վորին լես, յա վորին ջուղար տաս: Ըսեսց ել բանվորական իշխանություն կլի, վոր մի բանվորի գլխին քստասուն խազեյին կա կաղնած...»:

Այդ մտքերը, Սանթրոսյանի սպառնալիքը, գործի դժվարությունը, ժամանակի դան-

դադ սահելը, վարպետ Նիկողոսի խոթող ու անդուրեկան նայվածքը՝ Արտոյին շճմած դրու թյան մեջ եյին դրել և հենց դրանից եր յերե- վի, վոր նա մեքենան սրբելիս, անզուշու- թյամբ շուռ տվեց 2 փթանոց բենզինի բակը և բենզինը շաղ տվեց գետնով:

Ինչպե՛ս գազադեց վարպետ Նիկողոսը:

Կարծես դարանակալ թշնամին սպանել եր նրա վորդուն, կամ թե հովազն եր հարձակ- վում իր զոհի վրա:

Պոչավոր ակնոցների տակից նրա աչքերը հրդեհվում և ասես դուրս եյին ուզում պրծնել ակնակապիչներից, իսկ կնճռոտ ճակատին՝ քանդակվել եյին մանկան մատների հաստու- թյամբ կապույտ յերակներ:

— ...Կորի՛ր աչքիս առաջից... արո՛ւնդ թող թափեր եդ բենզինի տեղը... լակ՛տ...

Անողնական զոհի նման, իր դահճից դուր թ հայցողի աչքերով, կծկվել եր Արտոն պատի տակ և ջղայնությամբ կրծում եր յեղունդնե- բը:

«Փորձանք ա, պատահում ա, ցալն ու փորձանքը մարդկանց համար ա ստեղծված, հո սար ու չուրի համար չի...» — այդպես եր ասում ապին, այդպես ել մտածում եր Ար- տոն, բայց ասել չեր համարձակվում: Նրա շրթունքներն ու ծնոտը դողում եյին և բառե- րը՝ խորտակվում կոկորդում:

Կոնֆլիկտը տխուր վերջացավ:

Հաջորդ որը, բանվորները «Տեղկումի

հայտարարություններ» մակագրությունը կը- բող տախտակի վրա կարդացին —

ՔԱՂՎԱՄԲ

Ց... Գործարանի տեղկումի յեվ արտարակոց համձնաժ- րովի միացյալ ժողովի, վոր կայացավ 1925 բլի մարտի 5-ի № 7 արձանագրություն

Լ Ս Ե Ց Ի Ն Ք	Վ Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք
2. Մինքսյան Ար- տոյի հարցը, վորը գործին վերաբերվում ա շատ անփութ և ան- բարեխիղճ կերպով և այսոր ուշադրություն չդարձնելով, թափեց յերկու փութ բենզինը: (Ձեկ. վարպ. Նիկողոս)	2. Չգուշացնել Մինաս- յան Արտոյին, գործին վե- րաբերվել բարեխիղճ և անել նկատողություն բենզինի համար ու խիստ հանդիմա- նություն և վերջին ան- գամ զգուշացնել նրան: (Միաձայն)

Ժողովի նախագահ՝ (Վարձայան Կ.)

Քարտուղար՝ (Արտակունի Լ.)

Իսկականի հետ ճիշտ Ե.

Տեղկումի քարտուղար՝ (Ստորագրություն)

Հենց վոր դանդի ձայնը լսվում էր, Արտոն մեծ ուրախութեամբ հանում էր խալաթը, ավարտելու համար թեկուզ մի բոպե պահանջող կիսատ գործը թողնում, և վացարանի մոտ վազում:

Չնայած գործարանի վարչութիւնը լրավացվելու սապոն էր բաժանում բանվորներին, բայց և այնպէս Արտոն և վոչ մի որ սապոնով չէր վացվում:

Մեքենայի յուղով ու մրով շաղախված ձեռքը թրջում էր սառը ջրով, մի փոքր ճրմում և խալաթի փեշով սրբելուց հետո դուրս շտապում:

Գործարանից ստացած սապոնը ինչպէս և գրեթե ամբողջ ոտճիկը նա տալիս էր մոտիկ խանութպանին, վորի մոտ էլ ձաշում էր նա:

Գործից հետո, նա գրեթե ամբողջ որն այդ խանութումն էր անցկացնում:

Ճաշելուց հետո, թեք էր ընկնում խանութում և հաճախորդների շատութեան ժամանակ յերբեմն ոգնում Կարապետ աղին (այդպէս էլին կոչում խանութպանին):

Միրզ էր լցնում տոպրակում, կշռում էր, և կամ թե դովում սպրանքները:

Մեկ մեկ էլ պարապ ժամանակներն իր համար, ինքն իր ձեռքով կշռում էր թուֆ կամ ծիրան, խի ձմեռները չամիչ, ընկույզ, ու դառնում խանութպանին թե —

— Կարապետ աղա՛, գրի՛ր մեկ ֆունտ ծիրան...:

Դեհ, Կարապետ աղան էլ դրում էր, վոնց վոր ինքը գիտեր:

Նա շատ գոհ էր Արտոյից, վորը վոչ միայն խանութի մշտական հաճախորդն էր, այլև իրա ոգնականը:

— Քո տան պե՛ս յեղիր, խանութը քոնն ա, Արտո ջան — ասում էր նա, և Արտոն ինքն իրեն հրճվում էր:

Ընթրիքն էլ խանութումն էր անում Այրտոն:

Հաց ու պանիր, կամ հաց ու մածուն էր ուտում, կրկին ոգնում Կարապետ աղին և կնոս փիչերին մոտ՝ «բարի դիչեր» մաղթում նրան ու դնում քնելու:

Քնում էր բանվորական հանրակացարանում:

Այնքան կեղտոտ էր սպրում նա, վոր վողջ հանրակացարանն այդ մասին էր խոսում:

Համոզում ու խրատում էլին նրան, բայց ոգուտ չկար:

Գյուղից յեկած սրից, նա վոչ մի անգամ վոչ լողացել էր, վոչ էլ շորերն էր փոխել:

Քնում եր հաճախ առանց շորերը հանելու ու վեր կենում շորերով:

Առավոտները վեր եր կենում, աչքերը ճմռում և առանց լվացվելու վազում կարապետ աղայի խանութը, մի մեծ բրտուն վոյորում և կրծելով մտնում գործարանը:

Նա գյուղից յեկավ սովորելու պատրվակով, բայց սովորելու վրա և վոչ մի ուշադրություն չդարձրեց:

Գործարանի կոմյերիտական բջիջը նրան առաջարկեց գրել կարգալ սովորել: Տեղիումը միջնորդեց լիկկայան ընդունվելու համար, բայց նա լիկկայանում միայն յերեք որ մնաց:

Ուսուցչուհին բացատրում եր տառերը և սպա այդ տառերը կապելով սովորեցնում կարգալ —

— «Գյուղը կանգնի գե-րան կը-կոտրի»:

— Եդ յես գիդամ, վոր գեղը կանգնի գե-րան կը կոտրի — մտածում եր Արտոն ինքն ի-րան — բան կա բան ասե՛ք, թե չե գուր տեղը բեյիններս տանում եք, թե գեղը կանգնի գե-րան կը կոտրի: Եդ ա ելի՛ . . .

Յերրորդ որը նա ուսուցչուհուն դիմեց թե — Որիորդ, իմ ազգ ու անումը սովորացրեք: Եդ ա ինձ պետքը:

— Յեթե բոլոր տառերը լավ սովորեք ձեր աղգանունն ել, դեռ բոլորի ազգանուններն ել կարող կլինեք գրել:

— Ուրիշներին չեմ ուզում, դու իմ ազգ ու անումը սովորացրու . . .

— «Ազգ ու անումը թե սովորեցի են վախտը հեշտ ա, ինքս ձեռք կքաչեմ ու ժալովնիս կատանամ, թե չե ինչ ա, ամեն վախտ սրան խնդրի, նրան խնդրի, վոր քո տեղակ ձեռ քաչեն ու ամեն մեկն ել իմանա թե ինչ ես ստանում . . .» — մտածում եր Արտոն:

Ուսուցչուհին ընդառաջելով, մի կես ժամ առանձնապես պարապեց Արտոյի հետ ու սովորեցրեց նրան — գրել իր անունն ու ազգանունը:

Ամբողջ յերկու որ Արտոն դրադվեց իր անուն աղգանունը գրելով-ջնջելով:

Գործի ժամանակ, մեկ ել տեսար վերյրեց մի թղթի կտոր ու բուրժ մատիտով սկսեց խաղմղել . . .

Ար տ ո Մ ի ն ա ս յ ա ն

Ար տ ո Մ ի ն ա ս յ ա ն . . .

Արտոն ել լիկկայան չհաճախեց: Նա մեծ բարեխղճությամբ իր ուսումն ավարտած համարեց և սկսեց պատերի ու տախտակների վրա անընդհատ խաղմղել —

Ար տ ո Մ ի ն ս յ ա ն

Ար տ ո Մ ի ն ա ս յ ա ն

Ատ ո Մ ի ն ա ս ա ն . . . :



Ընկերները շատ եյին համոզում Արտոյին, վոր հեռու մնա կարապետ աղայի խանութիցը լիկկայան հաճախի, ուշադրություն դարձնի

մաքրության վրա, բաղնիք գնա, — սպիտակեղեն փոխի, բայց սգուտ չէր անում:

Կոմյերիտմիության ընկերներն ու տեղիումն ել զբաղվեցին այդ խնդրով:

Բշիջում ընկերները շատ մտերմաբար մոտեցան Արտոյին, նրան մանրամասն բացատրեցին մաքրության և սովորելու անհրաժեշտությունը:

Բոլորը խոսեցին, բոլորը հասկացրին, թե նրա բռնած ճանապարհը ուր է տանում:

Կոմյերիտուհի Լիզան նույնիսկ հանդիմանեց Արտոյին:

Կարմրել ու քրտնել եր Արտոն: Մտքում քննադատեց իրեն ու մի խոսք անգամ չգտավ պատասխանելու: Յեղունկներն եր կրծում:

— Վորտումները բավական չեն, պետք է ավելի կոնկրետ միջոցների դիմել: Յես առաջարկում եմ հանձնարարել մեր լավ ընկերներից յերկսին միշտ լինել Արտոյի հետ: Զբաղվել նրանով և նրան ավելի կապել մեր աշխատանքներին — առաջարկեց Գարիկը:

— Ճիշտ է:

— Ճիշտ է ասում:

— Համաձայն ենք:

— Բոլորս ել համաձայն ենք:

— Առաջարկում ենք այդ պարտականությունը հանձնարարել Գարիկին և Վարդանին:

— Ամենայն սիրով — վրա բերեց Գարիկը:

Բոլորը թեր քլեյարկեցին ու ծափահարեցին:

Գարիկն ու Վարդանը մեծ բարեխղճությամբ հետևում էին Արտոյին: Նախ խորհուրդ տվին հեռու մնալ Կարապետ աղից: Առաջին որերն իրենց հետ Արտոյին բանկոտպի նաշարան տարան և հյուրասիրեցին:

Ճաշարանից հետո նրանք միասին Գարիկենց տունն էին գնում, քիչ հանգստանում ու սկսում քաղաքական և կոմյերիտական խընդիրներով զբաղեցնել Արտոյին:

Զրույցներ էին կազմակերպում նրա հետ: Կովալենկոյից վերջ էլեր էին կարդում ու բացատրում, անեկդոտներ պատմում ու ժամանակն անցնում եր:

Անեկդոտներին նա լավ եր ականջ դնում, իսկ յերբ կարդում էին, չնայած վոր նրանց կողմն եր նայում ու ցույց տալիս թե լսում է, բայց միտքը բոլորովին ուրիշ բաներով եր զբաղեցնում: Զգվում եր նա այդ կարգալուց:

Յերեկոները նրանք Արտոյին կոմյերիտմիության ու բանվորական ակումբն էին տանում: Ծանոթացնում ակումբների աշխատանքների հետ: Միասին նստում խմբակների պարապմունքներին, բացատրում Արտոյին պարապմունքների մասին:

Բայց Արտոն մտքում հայհոյում եր նրանց, վոր իրեն ազատ չեն թողնում, վոր կաշկանդել են իրեն:

— «Ես ի՞նչ ա ախպեր, յեսիր հո չենք»—
մտմտում եր նա հաճախ, բայց սիրտ չէր ա-
նում բարձրաձայն ասել իր մտածածը:

Մի քանի ուր հետո, Գարիկն ու Վարդանը
նրան առաջարկեցին հաճախել լիկկայանի պա-
րապմունքներին:

Այս արդեն Արտոյին բոլորովին դուր չե-
կավ: Նա վրդոված ու արհամարհոտ ծամա-
ծուությամբ դեպի նրանք շուռ յեկավ ու սկսեց

— Ձեզ ինչ ախպեր, դուք իմ գլխիս տերն
եք, բոլ ա սպանե՛ցիք... Թող արեք ինձ, յես
ձեր յեսիրը չեմ: Բոլ ա պոչիցս ման գաք, չեմ
ուզում ախպե՛ր...

Նրանք յերկար համոզեցին, բայց ոգուտ
չունեցավ: Արտոն կտրականապես հրաժար-
վեց նրանց հետ ման գալուց և հանգստություն
առավ Կարապետ աղայի խանութում:

Գարիկն ու Վարդանը տխրեցին ու հաղթ-
վածի պես, բջիջի քարտուղարի մոտ գնացին,
պատմելու վողջ յեղելությունը:

Գարնան ծիլ ու ծաղկի, ծիծեռնակի ու ար
տուտի հետ գյուղ մտավ առաջին տրակտորը:

Հսկայական գոմեշի նման փնջալով ու ծան
բաշարժ նա որորվեց նեղլիկ փողոցներով և
կանգ առավ գյուղի հրապարակում:

Ինչպես «մարալ» դոմշին կամ «ջեյրան» յե
գանը «խամից հանելիս», տերը դուռն շեմքում
ձու յե խփում նրա ճակտին, կամ՝ վղից կա-
խում «թալիսմայի» կապույտ յեռանկյունին,
այնպես ել նոր ու յերկաթե գոմշի տերերը
վարդարել եյին նրա կուրծքն ու ճակատը՝ ի-
րանց «թալիսմա»-ներով: Կարմիր ժապավեն-
ներ եյին կապել նրա կրծքին և առջևից ցցել
հաղթական կարմիր դրոշակը:

— Տրախտորի մաշի՛ն...

— Տրախտորի մաշինն եկա՛վ...

— Ուռա՛, ուռա՛, տրախտորի մաշինն ե-
կա՛վ...

«Տրախտորի մաշինը» շարժվեց գյուղի
հրապարակից հասարակության լայն ողակով
չըջապատված դուրս յեկավ բաց դաշտը, ա-

ուսջինը՝ քաղաքացիական կռվում ընկած Ա-
լեքի այրու՝ Հեղնարի արտը վարելու:

Կոմյերիտականների քեֆին քեֆ չեր հաս-
նում:

Գարնանը հանդ դուրս յեկող մտրուկնե-
րի նման նրանք ուրախ թռչկոտում էին տրակ-
տորի շուրջը:

Ապա իրար մոտ դալիս, թեվ-թեվի գցում,
է զվարթ կերպով սկսում յերգել—

Գնա՛ս բարով, չգաս տարով,

Պարոն Խատիսով.

Ես աշխարհը մերն ա հիմա,

Մերն ել կմնա:

Հանդում միտինդ յեղավ:

Վարկային ընկերության նախագահը բա-
ցատրեց դյուղի չքավորներին հասցրած իրենց
առաջին ոգնության մասին: Ապա կանգ ա-
ռավ վարկային ընկերության, արտելների և
կոոպերացիայի դերի և նշանակության վրա:

Բոլորն ել վողջունեցին «տրախտորի մա-
շինի» մուտքը.—

Գյուղխորհրդի նախագահը,

Կոմյերիտության քարտուղարը,

Բատրակիոմը,

Ուսուցիչը,

Կին պատգամավորուհին:

Յեվ յերբ «Ֆորդգ^ոնը» չափ-չափելով ա-
ռաջին ակոսաչար ժապավենը զցեց դորը հողի
յերեսին, — ջահելները բարձրաձայն «ուռու՛»
կանչեցին, հասակավորներն ուրախությունից

հոհուալ սկսեցին, մի կին խաչ հանեց յերեսին,
և Արո ապու աչքերից յերկու կաթիլ արցունք
հանդարտորեն իջան նրա թավամազ այտերին:

Գարսևան աղան այդ որը հանդ դուրս չե-
կավ:

Չարչի Չալոյի դուքանի առաջ նստած,
նրանք յերկար դրուցում էին:

— Չտես շան վորդինե՛ր, մի երկաթի կտոր
են տեհել ու վո՛նց են վրա տվել... «ուռա՛»,
հա «ուռա՛», զահլաներս տարան ելի՛ր...

— Ե՛հ, ինչ ես սրտիդ նեղություն տալիս,
Գարսևան աղա, եդ մաշինը դրանց բան անող
չի՛ մի անձրև վրա տվեց թե չե, տեհար ժան-
դոտվեց ու խարաբա դառավ...

— Յես եդ վաղո՛ւց գիտամ ջանրմ, համա
ես շան վորդեանց լուպազությունը չի քաշ-
վում:

— Համբերի հլա, Գարսևան աղա, համ-
բերի՛ր... Աստծու արքայությունը համբե-
րողին ա...

Եդ դարնանը՝ Արո ապու արտը Գարսևան
աղան վարեց:

Վարեց, բայց ցանել չկարողացավ:

«Բոլոր կարտերը բացվեցին»...

Գյուղխորհուրդը քանդեց ապորինի կեր-
պով կապած պայմանը և արտը հանձնեց իր
խսկական տիրոջը:

Փոկը նրան սերմացու տվեց և կոմյերիտ-

միութեան բջիջը միաձայն վորոչեց, Գարսեան աղի «ջգրու» շարաթորյակների միջոցով ցանեւ, քաղել ու կալսել վարած արտը:

Այս անգամ Գարսեան աղան յեկավ Արո ապու տունը:

— Լա՛վ ոյին բերիք գլխիս, Արո՛ ապեր...
Հողդ վարել տվիր ու արխային տանդ վեր ընկար... Մի գյուղխորհուրդ ելա չես գնում, գործի յետևից ընկնես, ինձ թողել ես մեջտեղ ու զրաղ քաշվել: Կարող ա արխային ես, վոր եդ լոպազ լակոտները արտդ պտի բեջարեն: Վայ հո՛ղս գրանց գլխին... Մեկն ել դրանցից քո հարազատ տղեն եր, ելի՛, տեհանք... Լավ կը բեջարե՛ն, մաշալլա՛հ... բեջարելուն խոսք չկա...

— Յես ինչ անեմ, Գարսեան աղա, յես հլա են վախտը քեդ ասի թե, բանը զակոնով բըռնենք, համա դու քո ասածն արիր, հմի վոր զակոնը թող չի անում, յես ի՛նչ կարամ անեմ:

— Հմի զակոնով ես խոսում հա՞... Հմի ձենդ տաք տեղիցն ա գալիս: Սերմացու յեն տվել հարիֆին, ընդուր զակոնը միտն ա ընկել: Բա են վախտը խի՞ չիր զակոնի փեշիցը բռնում, վոր յեկել վոտներս եյիր ընկել թե «աղա ջան, քուլաչս կրող չկա, ծեծող չկա»:

— Գարսեա՛ն աղա, են վախտը ճար ու ճանտպարհ չեյի իմանում, տեր ու տիրական չունեյի, համա հիմի...

— Հմի տիրականներդ շատացել են հա՞... Ե՛ խնքոտներն ել տեր են կաղնել... հլա մի

թող իրանց տանը քոմագ ըլնեն, յետո քեդ տերութուն անեն: Դու յել են խելքին ես, վոր եդ հարամդադա պնիքները պտի քեդ ոգնե՞ն... Դրուստ ա ասած թե, վոր խելք ունենայիր, ել խի՞ աղքատ կլնեյիր: Թամամ դըրուստ ա...

— Ասա, ա՛յ Գարսեան, ել մարդ չկար, վոր եկար ես ցնդած հալիվորի հետ գործ բռնեցիր, եսքան տարի աղքատիցն ո՞վ ա խեր տեհել, վոր դու տենաս...

— Զակոնը չի թող անում, աղա՛ ջան, դակոնը— նորից իր խոսքերը կրկնել սկսեց Արո ապին:

— Զակոնը չի՞ թող անում, հա՞, ձենդ կարի մունդուիկ, վոր դո՛ւ ուղենաս, գլուխ ցավացնես, գլակոնը շատ լավ թող կանի, համա դու քո ել խելքով ուրիշ բաներ ես մտածում... քոփակ հալիվոր...

Գարսեան աղան ելի տաքացավ, բորբոքվեց, թքելով ասու չեմքին, դուռը պինդ վրա խփեց ու հեռացավ:

Վարպետը՝ վարպետ ե, բայց բոլոր վարպետներն ել միատեսակ չեն լինում: Նրանք կարող են հասարակականորեն անհրաժեշտ բանվորական վորս ծածանակամիջոցում, միատեսակ գործիքներով, միևնույն քանակութամբ արտադրել, բայց բնավորութամբ, վարվելակերպով, նրանք բոլորովին միատեսակ լինել չեն կարող:

Որինակ վարպետ Նիկողոսն ու վարպետ Ղեվոնդը: Ինչ նմանություն սրանց մեջ:

Առաջինը յերկաթի նման մարդ ե, կտրուկ բնավորութամբ: Մի թերություն կամ հանցանք ունեցար թե չե, իսկույն յերեսովդ ե խրվելու, ինչպես խարազան: Մի անգամ պոչափոր աղնոցների տակից յերեսիդ նայեց, բավական ե, իսկույն կհասկանա բնավորությունը, կճանաչի քեզ: «Մարդու զարգար եմ, մարդու զարգար, ձեռաց կճանաչեմ ինչ տիպ լինելը» — ասում եր նա յերբեմն իրեն շրջապատողներին:

Այդ բնավորության համար ել, նա կոմբլիջի սիրելին եր դարձել և բանվորներից շա-

տերի խոր ակնածանքի առարկան: Սանթրոսյանը նրանից եր խորհուրդներ հարցնում, իսկ կոմյերիտակիստները «պապաշա» ելին կանչում նրան:

Մի որ նա Արտոյին դառնալով—

— Ա՛յ, երեսիդ եմ ասում, անգալ ես, անգալ, յես անգալներին չեմ սիրում: Խելքդ գըլխիդ հավաքի, բան սովորի, թե չե յես ժամանակ չունեմ հաստադրութաների բեյլինում բան քամելու: Եսքան վախտ ա, ինչ ետեղ ես, հեչ բան չես Փահմում, բա դու յերբ պտի բան սովորես:

Ինչքան ել բանվորները սիրելին վարպետին, ինչքան ել Սանթրոսյանը նրանից խորհուրդներ հարցներ և ինչքան ել կոմյերիտակիստները նրան «պապաշա» կանչելին, բայց և այնպես նա Արտոյին դուր չեր գալիս:

Արտոյի աչքում՝ նա վոնց վոր մի հրեշ լիներ, վորը պատրաստ եր կտոր-կտոր անելու իրեն:

Բայց բոլորովին այլ եր վարպետ Ղեվոնդը:

Յերբ դնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովում դրված եր Արմենակ Սարինյանի կատեգորիան բարձրացնելու հարցը, նա ձայն խնդրեց և սկսեց.—

— Եդ ընկերը հեչ բանի պետք չի ախպեր, ինչ անում ես բեյլինը բան չի մտնում, գոր ուրինակ, ասում ես վալյոկը լվա, նա վինդն ա

Հոլորում, կամ թե ասում ես բենզին բեր, նա գնում պահեստապետի հետ գյալաջի յե բռնվում: Զորորինակ նրա կշտին աշխատող Հայրապետը, ախոս չի՛, նրան իրեք կատեգորի յել վոր ավել տաք կորած չի: Հայա թողեք դրա կատեգորեն մնա հինը: Զորորինակ յեթե նա մի երկու ամսից հետո խասյաթը փոխեց, սրտով կպավ գործին, են վախտը մի կատեգորի կավելացնենք: Թե չե, զորորինակ յեթե նրա կադեգորեն ավելացնենք, են լավ աշխատողի ձեռքն ել կթուլանա...:

Մյուս որն, յերբ Արմենակ Սարինյանը վորպես իր ավագ վարպետի, նրան դիմեց, կատեգորիայի մասին յեղած վորոշումն իմանալու համար, նա սկսեց—

— Բաղդ չունես ողուլ, ենքան խոսեցի, ճար չեղավ, չավելացրին: Յես ել դիտեմ, զորորինակ յեթե Հայրապետը 7 ստանա, դո՞ւ խի պիտի չստանաս: Զորորինակ դու յել են գործն ես անում, ինչ նա յա անում: Սանթրոսյանը չի ուզում, Սանթրոսյանը: Դժվարությունն ել դրա մեջն ա, թե չե զորորինակ յես ինչքան ել ուզենամ, յեթե Սանթրոսյանի սրտովը չեղավ՝ բան չի դառնա:

Արտոն ել վարպետ Ղեվոնդին եր սիրում: Նա ինչքան եր յերանի տալիս, վոր վարպետ Նիկողոսի փոխարեն, վարպետ Ղեվոնդը լինի իրենց բաժանմունքի ավագը:

Ինչքան ել վարպետ Նիկողոսը «անխղճորեն» դադեր, ինչքան ել «հոգեառ» լիներ Արտոյի համար, բայց և այնպես նա ուներ կարեկիցներ ու ցավակցողներ իր վշտերին:

Մի փոքրիկ շրջան եր այդ:

Իրար մոտ, իրար ձուլված, իրար ցավերով ապրող:

Մեկը՝ Կարոն եր:

Կարոն անկուսակցական եր:

Քանի անգամ ե նա փորձ եր արել կոմյերիտմիության մեջ մտնել, բայց չեր հաջողվել:

Քարտուղարից վերցրել եր անկետաները: Լրացրել: Ճոխացրած կերպով, «հեղափոխական անցյալի» վորոշ շաղախով գրել կենսագրությունը, կցել դիմումին. սակայն դիմում տալու բուսեյին, ինչ վոր մտքեր բռնել եյին նրա ձեռքը.—

«Յանի ո՞վ ա իմ անում, ես իշխանությունը հաստատ մնալու յա թե վոչ: Կարող ա փոխվեց: Լա՛վ, վոր կոմսոմոլիստ չլինեմ, ի՞նչ կը կորցնեմ... խառնակ տարի յե ախպե՛ր, ի՞նչ գործ ունեմ առանց ցավալ գլուխս ավետարանի տակ դնել...»: Մտածում եր Կարոն, հարցնում մի քանի անկուսակցականների կարծիքը և վորոշում հանում— «քիչ ել սպասենք, տենանք ինչ դուրս կը գա...» և դիմումն ու կենսագրությունը պահում թղթերի մեջ, մի ուր, ողտագործելու համար:

Մի անգամ ել նա բոլոր ձևականությունները կատարել և պատրաստվում եր դիմումը քարտուղարին հանձնել, յերբ իմացավ՝ ինչ վոր կոնֆլիկտ ե առաջացել Անգլիայի և ՆՍՀՄ միջև, վորը հզի յեր մինչև իսկ պատերազմի վտանգով:

— «Ինչ դիմում տալու վախտ ե յեղբայր, — մտածեց նա և դիմումը նորից տուն վերադարձրեց:

Յերեկոյան յերկար միտք արեց նա, ապա վերջնականապես կայուն վորոշում հանելով, պատուեց դիմումը և վորոշեց «վոչ սրանց խնդին խառնվել, վոչ շառին»:

Մի տարի անցել եր արդեն:

Գործարանում համառ կերպով պատվում եր այն լուրը, թե խնայողության ուժիմը կրճատումներ ե պահանջում, թե Սանթրոսյանն արդեն կրճատման ցուցակ ե կազմում:

Կարո՞ն հապճեպով կոմյերիտմիության բջիջի քարտուղարին դիմեց—

— Ընկեր Գրիգոր, խնդրում եմ ինձ անկետաներ տվեք...:

«Կոմսոմոլ դրվեմ,— մտածում եր Կարոն,— ով ա իմանում, մեկ ել տեսար անկուսակցականներին կրճատեցին»:

Արտոյի յերկրորդ ընկերը կոմյերիտական Արամն եր:

Բանվորներն ու կոմյերիտականները «Յերիտասարդ Գոն-ժուան» եյին ասում նրան:

— Պա՛հ, ես ինչ լավ աղջիկ ե— սիրում եր

բացականչել նա, փողոցում, իդական սեռին պատկանող ամեն մի անցորդի յետևից:

— Ախպե՛ր, ինչ բանվոր դասակարգ, ամենալավ դասակարգը՝ աղջիկների դասակարգըն ա, դրանց հոգո՛ւն մատաղ: Սոցիալիզմն ել՝ դրանք են: Առանց դրանց կյանքն ի՛նչ ա վոր... — ասում եր Արամը.— Զուր չի վոր մի յերգում ասված ե—

«Հայոց աղջիկներ լե՛, լե՛, լե՛, լե՛, ինչ անուն տամ ձե՛զ:

Հրեշտակ չեմ տեսել անուշ ջան, Վոր հրեշտակ ասեմ...»

Գործարանում աշխատանքը վերջանալուց անմիջապես հետո, Արամը տուն եր վազում, հանում աշխատանքային մրոտ ու մաշված շորերը, մաքուր վերնաշապկի վրայից կապում ոճիքն ու փողկապը, լավ արթուկած չալվարից հետո, հագնում փայլուն կոշիկները, մի քանի արծաթյա մոնոգրամներով դարդարված ձեռնափայտը վերցնում և սվսվացնելով դուրս գալիս զրոսնելու:

Քաղաքացի հետ Արամը բոլորովին մըտեմություն չուներ: Ատում եր նույնիսկ այդ դպրոցը:

— «Յես բանվոր մարդ եմ, իմ ինչ գործն ա, թե Մարքսը վո՛ր թվին ա ծնվել, կամ Լենինը վոր քաղաքներն ա ման յեկել: Եդ բոլորը թող ինտելիգենտները սովորեն, վոր կարողանան կոմսոմոլի, կամ կուսակցության մեջ մտնել...: Մի թող կռիվ լինի՛, տեսներք յես

լավ կը կուլեմ, թե եղ Մարքսն ու Լենինը վոտանավոր անողները...» — այսպես եր մտածում և հուսադրում իրեն Արամը:

Իսկ յերբ դիպցիպլինայի կարգով նրան ստիպում էյին քաղաքացիական, նա չնայած Ֆիդիկայես նստում եր դասարանում, բայց մտքով թափառում եր թատրոնները, կինոները, աղջիկների յետեվից ման դալիս, կամ հայացքով խուզարկում դասարանում նստած կոմյերիտուհիների աչքերը, դեմքը, կիսաբաց թեւերն ու կուրծքը:

Նարոզնիկական շարժումն ուսումնասիրում եր Արուսի դեմքի վրա, կամ թե «Некрас»-ի հիմնադրման հարցի պատասխանը վորոնում Լենայի աչքերում:

Քաղաքապետների ժամը՝ միակ ժամն եր, յերբ Արամը կենտրոնանում ու մտածում եր սիրո և դվարձալիքների մասին:

— «Կոմյերիտական սերը վորն ա ախպե՛ր, սերը՝ սեր ա...: Լավ աղջիկ ա, բրունի՛ր, գրկի՛ր ու համբուրի՛ր և յեթե կհամաձայնվի, ավելի հեռուներն ել գնա... Սրա կոմյերիտականը վո՞րն ա, չեմ հասկանում» — մըտածում եր նա:

Մի անգամ, այդ մտածմունքների քաղցր ժամին, խմբակավարը նրան դառնալով —

— Հապա՛, ընկեր Արամ, ասացեք թե վո՞ր թվին հիմնվեց «Աշխատանքի ազատագրման խմբակը»:

— Յես բանվոր եմ, ընկեր Վարյա՛ն, այդ-

պիսի հարցերը գնացեք համալսարանիստներին տվեք:

— Չե՞ վոր այդ մասին մենք անցանք այստեղ:

— Նշանակում ե եդ դասին յես այստեղ չեմ յեղել:

— Այսոր, հենց այսոր անցանք...:

— Ընկեր Վարյա՛ն, այսոր գլուխս սաստիկ ցավում ե և տրամադրությունս սաստիկ վատ ե. ամբողջ գիշերը չեմ քնել, սաստիկ տաքացրել եմ...:

— «Սայտառակվեցի» — մտածեց Արամը, յերբ ամբողջ դասարանը հանդիմանական և հարցական հայացքով նրան եր նայում: — «Հիմի Արուսն ու Լենան ըստեղ չլինեյին, ելի վոչինչ...: Լա՛վ, ինչու պիտի խայտառակվեմ յանի, յե՛ս բանվոր եմ, բանվորը հո պարտական չի ամեն բան իմանալու... — Հուսադրում եր իրեն Արամը — «մի թող կուլի յինի՛, տեսնենք յես լավ կը կուլեմ թե եդ հարցին պատասխան տվողը»...:

Արատյի յերրորդ ընկերը՝ Սիրակն եր, նույնպես անկուսակցական:

«Ես իշխանությունը լավ իշխանություն ա, համա վոր ելի բարձր ու ցածրը կա, եդ ա խարար անում: Թե հավասարություն ա, թող հավասարություն լինի: Թող բերեն ուժիկներն ել հավասարեցնեն, վոր ասենք իսկապես բանվորական իշխանություն ա...» — Այս եր Սիրակի «հավատո հանդանակը»:

Այս չորսը միջուկն էյին, իսկ սրանց ա-
վելի մոտիկ կանգնած էյին Արսենը («Ֆաղա-
տեր Արսեն») և Սեդրակը («Խոզատեր Սեդ-
րակ»):

Վարպետ Ղևոնդն ել և՛ սրանց ասածնե-
րին եր համաձայն, և՛ մյուսներին, և՛ բոլորին:

«Դժգոհներին և ծուլերին յեղբայրական
րնկերութուն» — այսպես եր բնորոշել բանվոր
Միսակը և այդպես ել կոչում էյին նրանց վողջ
գործարանում:

Կուս. անդամ Գեղամը չնայած Փիզիկա-
պես այնքան ել չեր սիրում թե՛ այդ քառյակին
և թե՛ նրանց շուրջը համախմբված բանվորնե-
րին, բայց հաճախ նրանց տրամադրություն-
ներն ոգտազործում եր այլ նպատակների հա-
մար:

Գեղամը բջիջի ակտիվ անդամներից եր,
1923 թվի ստաժով: Մի շարք խնդիրների շուրջ
նա չեր բաժանում բջիջի կարծիքը: Նա այն
միտքն եր պաշտպանում, վոր մի յերկրում
սոցիալիզմ կառուցելն անհնարին բան ե-
«Ով վոր կասի թե առանց համաշխարհային
հեղափոխության մեր յերկրումը սոցիալիզմ
կը կառուցվի, դուք չհավատաք: Մեկ ել մեր
յերկրի Քյավառի եչերովը սոցիալիզմ կը կա-
ռուցենք: Մի տուն ենք շինում ու ասում ենք
թե սոցիալիզմ ենք կառուցումը, ախպե՛ր, ես-
պես ել բան կլինի՛...»: — Սրանք Գեղամի մըչ-
տական խոսքերն էյին, վոր նա կրկնում եր
համարյա բոլոր կուսակցական ժողովներում:

Գեղամը սխալ եր համարում նաև թե՛ կու-
սակցության և թե՛ խորհ. իշխանության ղե-
կավարման մեթոդները և այդ ապացուցելու
համար հենվում եր դժգոհ տարրերի տրամա-
դրությունների վրա:

Արտոն ու իր ընկերներն ել այստեղ էյին
պետք զայիս նրան:

Յերբ բջիջի դռնփակ նիստում Գեղամը նո-
րից դուրս յեկավ պաշտպանելու իր տեսակե-
տը, վարպետ Նիկողոսը ձայն խնդրեց և ակսեց.

— «Ա՛յ բալամ, սոցիալիզմի կառուցելը
վո՛չ թամբալների գործն ա, վո՛չ ել դեյալա-
զանների: Դու սկի ռիսկ չես անում մի հարցի
քվեյարկությունին կարգին մասնակցես, վո՛ր
դիան պտի ռիսկ անես սոցիալիզմի կառուց-
մանը մասնակցես ու հավատաս: Մենք սոցիա-
լիզմի կառուցման ճամփեն պունել ու գնում
ենք և հաստատ հավատում ենք վոր տեղ կը-
հասնենք: Յեվ մեկ ել գիտենք, վոր ճամփի
կեսին մնալու յեն թե Քյավառի իշվանքը և
թե սոցիալիզմի կառուցման չհավատացողնե-
րը»:

Ի ոլորը վողջվորված վարպետ Նիկողոսի
հաջող ճառից, յերկարատեվ ծափահարության
արժանացրին նրան:

Այդ ճառից և ծափահարություններից վո-
ղջվորված, յելույթ ունեցավ բանֆակի ուսա-
նող բանվոր Աբրահամը. —

— Ընկերներ՝ առանձին վողջվորությամբ
սկսեց նա — թե ընկեր Գեղամը հույս ա դրել

Քյավառի եչերի վրա, վոր մի յերկրումը սո-
ցիալիզմ չի կառուցվի, ապա մենք ել մեր բա-
ղուկների ուժի և մեր հարազատ կոմկուսակ-
ցութեան վրա յենք հույս դրել և հավատացած
ենք, վոր սոցիալիզմը պիտի կառուցենք:
Տեսնենք ո՞ւմ հույսերը կարդարանան:

- Յալլա՛, հա՛, յալլա՛, հա՛...
— Հա՛, հա՛, հա՛, հա՛ա՛...
— Հա զուրբա՛ն, հա զուրբա՛ն, հա՛ հա-
ա՛...
— Վոժ տուր, վոժ տուր, միքիչմ ես յա՛-
նը...
Յալլաա՛, հա՛, յալլա՛, հա՛...
— Ես յանը տալ տո՛ւր, ես յանը տալ
տո՛ւր... տո յես քեզ չասի՛... ես յանը տալ
տուր ե... դժար ա հա՛, բա գիզըմիդ թե
խուրմա յե՛ր...
— Հա՛ ջա՛ն, հա զուրբա՛ն...
— Յալլա՛, հա՛, յալլա՛, հա...
Ամբողջ դործարանը մըջնային աշխուժու-
թյամբ թափվել էր բակում կանգնած բեռնա-
տար ավտոմեքենաների շուրջը և իջեցնում
ստացված մեքենաները:
Սա յել յուրատեսակ խնճուկք էր: Բոլորն
ուրախ էյին, ծիծաղկոտ: Աշխուժո՛:
Իսկ Սանթրոսյա՛նը: Ո՛, նրա քեֆին քեֆ
չէր հասնում: Մի տարուց ավել էր ինչ նա ա-
մեն տեղ պարծանքով խոսում էր— «սպասե՛ք,

Հլա մի Գերմանից մաշինեքս բերիլ տալ-տամ, ե-լախտը կիմանաք»: Ու հիմա նրա այդ ցանկալի յերազն եր, վոր կյանք եր դարձել: Կապույտ խալաթը հագած, նա գնդակի նման դլորվում եր ավտոնների շուրջը: Ամբողջ ու-ժովը հրում եր մեքենայի իջնող մասերի հե-տեվից: Ամենասպառասխանատու ուղմաճա-կատը ղեկավարող հրամանատարի նման ա-նում եր խիտ և սպառնական հրամաններ:

Բոլորն ել աշխատում եյին: Մկաճ Սան-թրոսյանից մինչև վարպետ Նիկողոսը և վար-պետ Մինասից մինչև Արտոն:

— «Համա դըժար ա հա՛, — մտածում եր Արտոն ծանր բեռի տակ, — յանի ես ինչ մեր գործն ա, չեմ հասկանում»:

— Յալլա՛, հա՛ յալլա՛, հա՛...

— Հա դուրբան, հա դուրբան, հա՛, հա՛:

— Վոժ աուր, վոժ աուր, եսոր ուժինը

Սանթրոսյանի վրին ա...:

— Հա ջան, հա ջան, յալլա՛, յալլա՛...

Բոլորի ձակատից ել թրջված ապակու նը-ման կախվել եյին քրտինքի կաթիլները:

Բոլորն ել չարչարվում եյին, բայց ուրախ:

Ինդուստրիայի դիմավորումն եր այդ:

Մուսյլ եր գերմանացի մասնագետ Կարլ Հերմանը: Իր բերած մեքենաների նման ծանր ու մուսյլ:

Ո՛վ կհամարձակվեր ծիծաղել նրա առաջ, կամ բարձրաձայն խոսել:

Մեքենաները սարքի դեցեց, բանվորական խնջույքում բոլորը խմեցին նրա կենացը և մյուս որվանից նա սկսեց բանեցնել բոլորովին նոր ձևի մեքենաները:

Սանթրոսյանը Կարլ Հերմանի «փեչն» ել «քաչեց»: Իր առանձնասենյակում, մտերմա-բար, լաղավաղված ուսերենով, նրան նույն-պես մի քանի քաղցր հիշոցներ բաշխեց, ապա ձեռքը սեղմելով դուրս յեկավ և նրա հետ մի-ասին զնացին գործարան:

Ընդունակ յերիտասարդ բանվորներից Սանթրոսյանը ջոկել էր մի յոթ հոգու, նոր մեքենաների վրա սովորելու: Այժմ տանում էր 'գերմանացի մասնագետին՝ յերիտասարդ-ներին նրան հանձնելու համար:

— Вот хорошо ученики, Они комсомолы, Зна-еши што таки комсомол?

— Знай, знай...

— Ну хорошо учит их... а то больше ни пиом за твой здаров... հա ..

— Знай, знай...

— Вот вазми и учит их... Хорошо учит их... հա...

— Карош, карош...

Ապա խոսքն ուղղելով յերիտասարդ բան-վորներին, ասաց.—

— Թե մարդ ա, թե լամփի շուշա յե, ես ա, ձեր մեծավորն ա, լավ գլխներդ կախեք, կակուղ դամարիցը բռնեք, փեչակը դավ-

Թեք: Սա նեմեց ա, սա մեր յերկրի մարդկե-
րանցիցը չի, հայ-հույ չանեք խրտնաց-
նեք... Թե չե վոր մի մազաչափ նեղացրել եք,
ձեզ դիփիդ ել ես աղելիցը հանիլ տալտալ
կտամ...

— Շատ լավ, շատ լավ...

— Լավը լավ, համա խելքը գլխներիդ
ժողովեք հա՛, ելի յեմ ասում, սրտին չկաչեք
հա՛...

Հետո կրկին դառնալով Կարլ Հերմանին,
ամուր կերպով սեղմեց նրա ձեռքը:

— Ну Ерманд ջան, я пашол, ты хорошо па-
сатри на машини и на дела... и учит это мал-
чики...

— Карош, карош...

— Ну дасвидан, Ерманд ջան:

— Знай, знай...

Նոր մեքենաները խոշոր չափով բարձրա-
ցնում եյին արտադրողականությունը և իջե-
ցնում ինքնարժեքը:

Նրանցից յուրաքանչյուրը մի բանվորա-
կան որվա ընթացքում կատարում էր չորս
րանվորի դործ: Իսկ յեթե յերեք հերթով, ան-
ընդհատ աշխատեցնեյին, յուրաքանչյուրը նը-
րանցից կարտադրեր 12 բանվորական միավորի
չափով:

Իրա համար ել Սանթրոսյանն ամեն տեղ

նոր մեքենաների դովքն եր անում և ամեն ոք
նորանոր այցելուներ բերում գործարանը և
բացատրում այդ հաղվադյուտ մեքենաների
դադտնիքը:

Մռայլ էր գերմանացի մասնագետը: Ծանր
ու մռայլ:

Յերբեք չեք ծիծաղում:

Աշխատում էր ինչպես ժամացույցը: Վոչ
մի ավելորդ շարժում, վոչ մի ավելորդ խո-
սակցություն:

Յերիտասարդ բանվորներն ել աշխատում
եյին նրա ժամացույցային տակտով, առանց
խոսակցության, առանց կատակելու: Նրանք
վոչ թե վախից եյին այդ անում, այլ պատկա-
ռում եյին այդ մռայլ մարդուց:

Ինչպես ծիծաղել կամ կատակել, յերբ այդ
մարդն ամբողջ ուժով և ուշադրությամբ
կենտրոնացած իր գործին՝ բուռ կերպով աշ-
խատում էր:

Ծիծաղել կամ խոսել, դա հավասար էր
այն բանին, յերբ մեկն յերգեր պատասխանա-
տու ժողովում, կամ պարեր մահվան հանդի-
սում: Իսկ ո՞վ կհամարձակվեր այդ անել:

Կարլ Հերմանը Սանթրոսյանի պես սըր-
տացավ էր դեպի գործն ու մեքենաները: Նա
ուշադրությամբ հետևում էր աշակերտների
աշխատանքներին, ժամերով կուսցած մեքենա-
նեքի մոտ, ձեռքի և դեմքի շարժումներով

նրանց բացատրում և սովորեցնում էր նոր մեքենաների գաղտնիքները:

Իսկ նրանք, հմայվածի նման ունկնդրում էին այդ մռայլ մարդուն:

Յերկու շաբաթ էր անցել, բայց ամբողջ դործարանում խոսում էին «նեմեցի» բերած դիսցիպլինի մասին: Վարպետները զարմացել էին, վոք այն «չուլուղչի» ու «գլայազա» տղերանցից այդպիսի լռակյաց դործի մարդիկ էին դուրս յեկել:

— Հալալ ա նեմեցին ախպե՛ր, դործը լա՛վ դրեց:

— Բա խի յեն ասել նեմեց... —խոսում էին վարպետները:

— Հինդենբուրգի հայրենակիցը մեր դործարանի գլխին մի նոր Հինդենբուրգ դարձավ:

— Այն Հինդենբուրգի դեմ մենք կը կըռվենք իսկ սրան պետք է վողջունել — դրուցում էին կոմյերիտականները:

Իսկ Սանթրոսյանը չափազանց դո՛ւ էր Հերմանից: Գործարանի ամեն մի բաժանմունքում նրա գովքն էր անում: Վորպես որինակ նրան էր հանձնարարում բոլոր վարպետներին—

— Ա՛յ, Յերմանդի պես յեղեք, Յերմանդի պես, ձեր աղելում դիսցիպլինը շատ բնորոշ ա, պետք է վերացնիլ տալ—տաք, պետք ա կարգ ու կանոն դնիլ տալ—տաք:

Ապա այցելում էր կարլ Հերմանին:

— Ну Ерма д Зань, дела как?

— Карош, карош!

— Ерманд Зань, я очень частлив, што ти у мне работаеш. Ти хорошо дисциплини поставил. Маладец Ерманд Зань маладец.

— Знай, знай.

— Патом ти хорошо пасматри што это молчки учит.

— Знай, знай.

Ու Սանթրոսյանը «նեմեցի աղելիցը» հեռանում էր ամբողջ հոգով փառավորված:

Բաժանմունքի յերիտասարդ բանվորները շատ դո՛ւ էին Հերմանից: Նրանք մեծ ուշադրությամբ լսում ու կատարում էին նրա յուրաքանչյուր ցուցմունքը և ամեն որ տուն դրնում՝ նոր բան սովորած:

Փոքրիկ բաժանմունքում, գործարանի ամենաբարդ մեքենայի վրա, աշխատում էին յերեք հոգի: Մեկը վարպետ Մխակն էր: Նա 37 տարի յեր արդեն, ինչ բանում էր այդ նույն տեղում, նույն մեքենայի կողքին:

Յեւ նրան այնքան ծանոթ էին մեքենայի բոլոր մասերը, բոլոր մանրամասնությունները, վորքան իր հինգ մասները:

Նա բարձրահասակ էր: Ճաղատ գլխով. ճակատին խոր կնճիռներ էին քանդակվել, դեմքին ծալքեր ու խորշոմներ: Զեռները մազոլներից կարծրացել, կոշտացել, ճեղքճեղքվել էին, բազմամյա կաղնու կեղևի նման:

Ինքն էլ վիթխարի կաղնի լիներ ասես, վորի յերկու կողմերից, մատղաշ ծիլերի նրման, աճել էին Գարիկն ու Վարդանը, — նրա աչալուրջ յերկու ողնականները:

Յեւ վիթխարի կաղնու նման պատկառելի յեր վարպետ Մինասը, ամենքից սիրված, համակրելի:

Նույն գործարանում աշխատող յերիտասարդ գրող Մուրճենցը, վոգեվորված, պատի

թերթում մի վոտանովոր գրեց վարպետ Մխակի մասին—

«Գործերդ լավ, խոսքերդ քաղցր վարպետ, Մեջքդ ամուր, հասակդ բարձր, վարպետ:

Բոյդ յերկար, կաղնու ծառ է, վարպետ, Դու մեզ համար դեկավար ես, վարպետ:

Լավ բանում ես, քրտնում ես վարպետ, Շարաք որն էլ, լավ գցում ես վարպետ:

Մեմբ քեզնով եմբ հպարտանում, վարպետ, Դու մեր հայրն ու ուսուցիչը, վարպետ:

Այսպես գրեց Մուրճենցը: Բանվորները կարդացին և ուրախացան, իսկ վարպետ Մխակի հասակակիցներն սկսեցին կատակել—

— Այ տղա, Մխակ, վոտանավոր ել դուռ, ել ի՞նչ ես մտածում:

— Ե՛հ, ջահելություն ա, անում են տղերքն, ինչ ասեմ:

Թե՛ Գարիկն և թե՛ Վարդանն՝ կոմյերիտականներ էին:

Առաինը չորրորդ տարին էր, ինչ գործարանում էր, իսկ յերկրորդը՝ նրանից չորս ամիս հետո յեր յեկել:

Գործարան ընդունվեցին վորպես անչափահասներ, վորպես «բրոն», ինչպես կասեր Սանթրոսյանը, և հիմա արդեն յենթավարպետներ էին:

Նրանք արդեն սովորել էին քանդել մե-

քենայի մասերը, սարքել նորից և մասամբ դեկավարել ամենաբարձր այդ մեքենան:

Ամբողջովին մրի ու յուղի մեջ, նրանք հաճախ մեքենայի վրաների մոտով սողոսկում ելին ներս, մաքրում, փայլեցնում ամեն մի մասը, փայփայում մեքենան, ինչպես ամենամոտ ու հարագատ մտերմի:

Վարպետ Միսակը հաճույքով եր դիտում: Նրա սիրտն ուռչում եր, վոզեվորվում, յերբ տեսնում եր, վոր փոխարինողները ճիշտ այնպես ելին վերաբերվում մեքենային, ինչպես ինքը՝ տասնյակ տարիների ընթացքում:

Յերբ նայում եր իր յերիտասարդ ողնականներին, նրան թվում եր, վոր ինքն ե ջահելացել և հին վոզեվորությունն ու առույգությունն են հետ դարձել նորից:

— Ապրեք տղերք, չարչարանքս դուր տեղ չանցավ: Հմի թե մեռնեմ ել, արխային կմեռնեմ, վորովհետև դիտեմ, թե մաշինես չի կադնելու:

Ամեն տեղ, վարպետ Միսակը գովեստով եր խոսում իր ողնականների մասին:

— Ղոչախ տղերք են, հալալ ըլնի իրանց կաթը: Քեֆս բերում են ախպեր, յերանի չեր մեր բոլոր աշխատակիցներն ել եդպես լինելին:

Սանթրոսյանը նույնպես մեծ բավականությամբ եր խոսում Վարդանի ու Գարիկի մասին և յերբ նրանցից առաջինը ցանկանում եր կուսակցության մեջ մտնել, իջ բլոկնտի թղթի վրա նա այսպես գրեց.—

«ՅԵՐԱՇԻԱՎՈՐՈՒՄ

Հնկեր — Վարդանը — մեր — աշխատանքին լավ — մտիկ — անողներինն ա: Խելքը — գլխին: Գործին — փահմող: Մաշինեքին — ու — հաջաթներին — լավ թամաշ — անող: Համ ել — լավ կոմսոմոլ ա: Իսկական — կոմսոմոլն — ել ըտենց պտի — ըլի: Ըդրա — համա ել — յես յերաշխավոր — եմ — նրան — ունթունել տալ — տանք — մեր կուսակցության — միջին: Ցանկալի — համարել — բջիջին հաստատել —

Յերաշխավորում եմ

Սիմոն Սանթրոսյան

Ստաժ — 1903. № 242543»

Շատ քչերի համար եր Սանթրոսյանն այսպիսի գրություններ գրում և այդ պատճառով ել բջիջում յերբ կարդացին նրա յերաշխավորությունը, շատերը բացականչեցին «դե վոր Սանթրոսյանն ա յերաշխավորել ել ինչ հարցընենք», «կա՞րանք չընդունենք»:

Արդեն յերկրորդ ամիսն եր, ինչ վարպետ Միսակը պառկած եր հիվանդանոցում:

Յերկար տարիների աշխատանքը նրան հյուծել, ուժասպառ եր արել ու վերջնականապես անկողին նետել:

Վարդանն ու Գարիկը շաբաթական յեր-

կու անգամ նրա մոտ ելին դնում: Տանում անհրաժեշտ իրերն և ուտելիքները, նստում մահճակալի կողքին, զրուցում գործից, գործարանից ու վարպետ Միսակի համար կյանքը նորից քաղցրանալ, հրապուրիչ եր սկսում դառնալ:

Անցան ամիսներ:

Վարպետ Միսակը տնքաց յերկար, տանջվեց անկողնում, բայց ուժերն սպառվեցին ու մի առավոտ յերբ արևը նոր եր ծագում, նրա զարկերակն ընդմիջտ կանգ առավ:

Մեռավ վարպետ Միսակը:

Վարդանն ու Գարիկը թերթում հողվածները գրեցին անգուղահան վարպետի մասին, ամբողջ գործարանը հուզարկավորեց նրա դիակը և նորից մեքենաները նույն չափով բանել սկսեցին:

Արմատի մոտ բուսած ճյուղերը զորացան, աճեցին ու բունեցին կաղնու տեղը:

Վարդանը գործարանի ամենաբարձր մեքենայի ղեկավարը դարձավ, իսկ Գարիկը, նրա ոգնականը:

— Յես քեզ հարիր հետ ասի, — սկսեց վարպետ Նիկողոսը, — վոր գործը թողած գյալաջի չեն անի, ես մի սհաթ ա ինչ պահեստի դռանը թրև ես գալիս, բոլ ա գլուխ պահես, հոգիներս հանեցիր... Վե՛ կալ, են կլլաչն ու վալլակները վնտերը քանդի:

Հակառակ բազմիցս արած զգուշացումներին Արտոն նորից, փոխանակ մի քիչ ույժ գործադրելու և պտուտակը վորորելու, սկսեց կլլաչով նրա գլխին խփել, վոր շուտ քանդվի:

— Յես քեզ քանի հետ ասի, վոր կլլաչով չեն խփի վնտի գլխին, համա բեյինդ չի մըտնում: Թո՛ղ, թո՛ղ ետեղ, ա՛յ ըսենց, վնտի գլխիցը կրոնացնես, կամաց կը հոլորես ու հեշտությամբ դուրս կգա: Դե մի փորձի տենանք:

Արտոն մոտեցավ պտուտակին ու առանց թեմին ույժ տալու, կամացուկ սկսեց վորորել, չեղավ...

— Այ բալա, ախր գործին ըսենց մոտ գալ չի լինի, ընչի յես ըտենց վախում, մի քիչ ուժ սուր թևիդ տնաչենի տղա, ընենց ես գործին մոտ գալիս, վոր ասես գործը դադան ա, քեզ կուտի: Զահել տղա յես, մի քիչ քեզ դու արա, յես քո վախտը ասլանի բերան եյի ճղում: Այ եսպե՛ս, կլլաչը սինդ բունի ձեռումդ և ուժով հոլորի: Մեկ ել արա տենանք...

Այս անգամ Արտոն մեծ դժվարությամբ քանդեց պտուտակը և վալլակը հանելով, մի ծայրն ամուր խփեց գետնին:

— Այ սատկես դու, սարսաղի կտոր, հենց նոր չասի, վոր վալլակի ծերից գետին չխփես, ծերը տափակում յա և ել վնտի մեջ չի մտնում, սարսա՛ղ... Չե՛ ախպեր, չե՛ քեզանից բան չի դուրս գա, դատարկ տեղ գլուխ ենք ուռացնում...

Չանցած կես ժամ, Արտոն բենզին բերելու պատրվակով դուրս գնաց ու գործարանի բակում, մի քարի վրա պըպզած, յերկար զրույցի բռնվեց գիշերապահի հետ, վորը ցերեկներն իր ազատ ժամանակը համարյա գործարանի շուրջն էր անցկացնում:

Աշխատանքի գործարքային ձևին անցնելը և ռացիոնալիզացիան Սանթրոսյանին հրամայողաբար ստիպում էին վերանայել շտատները և ազատվել անգործունյա ու ծուլ տարրերից:

Ելեքտրական լամպի լույսի տակ, յերրորդ ժամն էր արդեն, ինչ նա իր առանձնասենյակում նստած, բանվորների անվանացուցակն առաջին, խորասուզվել էր նրա մեջ:

Թղթի յերեսին ասես զորատես լիներ, բոր թանվորները շարքով անցնում էին նրա աչքերի առաջից: Ահա նա բռնում էր մեկին, աչքերը կկոցելով յերկար նայում, հիշում, հաշվի առնում նրա թերություններն ու առավելությունները, ամսվա մեջ քանի՞ անգամ էր ուշացել, քանի՞ որ բացակա յեղել: Նորից մտածում և բաց թողնում նրան: Ահա յերկբորդը, յերրորդը, և այսպես անվերջ:

Վերջապես նրա անունը — Մինասյան Արտոն:

Կանգ առավ, նորից կկոցեց աչքերը, յերկար մտածեց — «...կոմսոմոլ ա... ջհաննամ թե կոմսոմոլ ա... հաստագլուխ ա, հաստա-

գլուխ... բեյինում բան չի մտնում... Այի, անգյալ զադ ա, ոադ արա թող գնա'...»:

Մի անգամ ել մտածեց և ապա ծուռ ու մուռ տառերով ցուցակում, նրա անվան դեմը գրեց — «Կոմսոմոլ»:

Նա դեռ յերկար շարունակեց իր այդ հետաքրքիր աշխատանքը և յերբ ավարտեց, ցուցակում արդեն մոտ մի տասնյակ մարդկանց անունների դիմացը գրված էր հեղինակավոր վճիռը:

Առավոտյան գործարանում արտակարգ յեռուզեռ էր:

Բոլորը հավաքված հայտարարությունների տախտակի մոտ, կարդում էին որվա նորությունը, — կրճատվածների ցուցակը:

«Դժգոհների և ծուլների յեղբայրական ընկերությունը» սլատվավոր տեղ էր գրավել այնտեղ:

Պակասը լրացնում էին Արսենը («բաղատեր Արսեն») և Սեդրակը («խոզատեր Սեդրակը»):

— Համա լա՛վ են ջոկել հա՛:

— Սանթրոսյանի մեքը չմեռնի, ջոկիլն ել ըտենց կըլնի՛:

— Բա նա թաց տեղ ընող ա՛ — խոսում էին բանվորները:

Նորից կարկտաբեր ամպերը կուտակվեցին Արտոյի գլխին:

Անգործությունը նորից իր թևերի տակն սռավ նրան:

Նա նորից դողգոջ քայլերով ներս եր մըտնում Գավկոմի շենքը, նախասենյակում հերթի սպասում, գլխարկը հանած բարեում ծուռ սեղանի մոտ նստած իր հին ծանոթին, ձեռքերը կողքին կպցրած, կանգնում եր նրա սեղանի մոտ ու անհամարձակ ձայնով կըմկըմում —

— Հնկեր քարտուղաք, բա վոնց կլինի մեր ճարը:

Պատասխանը ծանոթ եր:

Գավկոմից հետո նա պրոֆմիտություն եր դնում: Այնտեղ ել սովորաբար միշտ նույն պատասխանը:

— Գործ չկա:

Բայց մի որ պրոֆմիտության քարտուղարը, վոր նախկին բանվորներից եր, ուրախ կերպով դիմավորեց Արտոյին և հաղորդեց, վոր նրա համար գործ ե գտել:

— Ի՞նչ գործ ա, — հարցրեց Արտոն:

— Հասարակ բանվորի աշխատանք ե, կարբիդի զավոդում:

— Ձե՛, յես կարբիդի զավոդ չեմ գնում, ենտեղ ասում են թունավոր դաղերով են աշխատում: Մի սաղ ջան ունենք, են ե՞լ վրատանք:

— Այ ջանս, ենտեղ վոչ մի թունավոր բան չկա:

— Ձե ախպեր չեմ ուզում, դուռ՞վ ա...

— Դու գիտես են վախառ ուրիշին կուղարկենք:

— Յանի խի՞ իմ արհեստից կըճատեցիք, վոր հիմի յել կարբիդի զավոդն եք ուղարկում:

— Մե՞նք ենք կըճատել:

— Բա ո՞վ ա՛ կըճատել:

— Յանի չգիտես ելի՛:

— Գիտեմ, համա վոր դուք ուզենայիք ինձ չեյին կըճատի:

— Բո մասին հենց մեր կուսակցական բանվորներն են դանդաղում, վոր ծույլ ու անուշադիր ես:

— Հալբաթ կգանդատվեն, բա նրանք ըսկի կուզեն, վոր մի հասարակ գյուղացին արհեստ սովորի, մարդ դառնա: Ուղարկեք, ախպեր ուրիշին ուղարկեք կարբիդի զավոդը, մենք ել անգործ կը թափառենք, յա կգնանք ավազակություն կանենք... ըտենց եք սովորացնում մեզ...



Յերկուշաբթի խառնուրդներն յեթե մեկն
անցնելու լիներ քաղաքային այգու ալեյով,
նստարանների վրա նա կհանդիպեր բազմաթիվ
մարդկանց. վոմանք առանձին, վոմանք խըմ-
բով, մեկը՝ լրագիր կարդալիս, մյուսները՝
վիճելիս:

Նա ահամոտից պիտի կարծեր, վոր դրանք
առաջին որվա զբոսնողներն են, վորոնք այն-
քան են տարվել իրենց վեճով, կամ խորասուզ-
վել լրագրի տողերում, վոր չեն նկատել, ինչ-
պես կիրակին արդեն մթնել է, գիշերը նրան
մահվան անկողին իջեցրել ու յերկուշաբթի ա-
ռախոտն է բացվել արդեն:

Բայց վո՛չ, այդպես չէ, նրանք բոլորն էլ
չենց նույն առախոտ յեկան ու շարվեցին նըս-
տարանների վրա: Նրանց ճամբան վոչ գործա-
րան է տանում և վոչ էլ մի վորևէ գրասենյակ,
կամ պաշտոնատեղի: Տնից քաղաքային այգի
և ապա այգուց՝ տուն — ահա նրանց ամենոր-
յա ճանապարհը:

Քաղաքային այգու այդ մասսան այլա-
տարր եր և այլադասակարգ. —

Ահա կոտր ընկած վաճառականը, չհաջող-
ված ազգային հերոսը, անգործ քահանայն,
անուսաղիբ դնդապետը, ազգայնացրած տան
տերը, անսխալտոն սպան, աշխատանք փրնտ-
ռող գյուղացին, կրճատված պաշտոնյան, և
ի լրումն այս բոլորի՝ ծառերի տակ պըսպած
վանեցիների «պարլամենտը»:

Արտոն էլ որվա մեծ մասն այստեղ եր անց
կացնում, պրոֆմիուլթյունից դուրս դալուց
հետո, ուղիղ քաղաքային այգի յեր դալիս,
նստում հաստարուն մի ծառի տակ և խորա-
սուզվում մտքերի մեջ:

Յերկար մտածեց Արտոն, ու այդ մտած-
մունքների մեջ որեր անցան:

Այլևս հնար չկար: Վերջին դուռը վոր պի-
տի բաղխեր դա կոմյերիտմիուլթյան կենտրո-
նական կոմիտեն եր:



Նորից ծուռ դրած սեղանի մոտ նստած մի
այլ յերիտասարդի հանդիպեց նա, սա արտա-
քինից ավելի համակրելի յեր, նրա յերկար
վերարկուն մինչև վոտներն եր փաթաթվել և
գլխարկի արանքից մազերի մի փունջ անխնամ
կերպով թափվել եր ճակատի վրա:

Այնքան նիհար եր նա, վոր կարծես թե
նոր էյին հիվանդանոցի խալաթը հանել և
հազցրել իր վերարկուն: Ակամա ներս մտնողը
պիտի մտածեր ու խղճահարվեր, թե ինչո՞ւ
այս վոսկրացած յերիտասարդին աշխատե-
ցնում են, միթե՞ բժիշկները չգիտեն այդ մա-
սին:

Բայց նա, հակառակ այդ կարծիքին, յե-
ռանդուն աշխատող եր ու դեկավար:

— Ընկե՛ր կատարյան — դիմեց նրան Ար-
տոն — անգործությունից մեռանք, վոչ դավ-
կոմն ա ուչք դարձնում վոչ էլ պրոֆմիուլթյու-

նը, հույսս ձեզ վրա յա, բալի դուք մի ճար ա-
նեք:

— Ի հարկե, ընկեր, մենք անգործների
բորսան չենք ղեկավարում, բայց կարող ենք
միջնորդել, վոր քեզ ընդունեն տրակտորների
կուրսերը. ցանկանո՞ւմ ես գնալ:

Արտոն մի քիչ մտածեց. ապա.—

— Ցանկանում եմ, վոնց չե՞:

Կենտրոնական Կոմիտեյի բլանկի վրա նա
համապատասխան գրություն գրելուց հետո,
հանձնեց Արտոյին և ապա շարունակեց ծուռ
առդերով իր շրջաբերականը:

Կապարյանը սիրելի ղեկավար եր: Նա
մեկն եր այն մարդկանցից վորոնք, անխնա խա-
րազանում եյին ամեն մի թերություն, ամեն
մի սխալ և դրա համար ել հարգվում ու մե-
ծարվում եր կոմյերիտական լայն մասսայի
կողմից:

— Կապարյանը հոգի յե, հոգի... .

— Իսկական ղեկավար ե Կապարյանը... .

— Ափսոս չի՞... .

Հաջորդ օրն Արտոն նորից Կենտրոնական
Կոմիտե մտավ:

— Հընկեր Կապարյան, չնդունին:

— Ինչո՞ւ... .

— Յեսի՛մ, չընդունին ելի՞... .

— Վո՞նց թե չընդունեցին, ի՞նչ պատճա-
ռով... .

— Յեսիմ, ասում են թվաբանություն
պոի իմանաս... .

— Իսկ դու չգիտե՞ս:

— Ծ՛ցծ... .

— Ի հարկե պետք ե թվաբանություն ի-
մանալ, բա ի՞նչ եյիր կարծում:

— Վորդիան իմանամ, հե՞րս ա սովորաց-
րել, թե՞ մերս:

— Բոլորովին չգիտե՞ս... .

— Հե՛չ:

— Բա մինչև հիմա ի՞նչ եյիր մտածում ին-
չո՞ւ չեյի՛ր սովորում:

— Իմ սովորացնողն ո՞վ եր:

— Գյուղերիտ դպրոցը, բանֆակը, քաղ-
լուավարը, լիկկայանը... .

— Ե՛հ, քաղցած փոքրին լիկկայանն եր
պակաս, մի գործ տվեք ապրենք, հետո սովո-
րին իրան-իրան կլինի:

— Բա աշխատած ժամանակդ ինչո՞ւ չը-
սովորեցիր:

— Ութ ժամ չարաչար աշխատելուց հետո
ել սովորելու խելք ա մնո՞ւմ:

— Ե՛հ, բարեկամ, ինչպես յերևում ե դու
վերին աստիճանի ծույլ ես, գործի ժամանակ
չարչարվում ես՝ սովորել չես կարող, իսկ ան-
գործության ժամանակ՝ փորդ ե քաղցած լի-
նում, դու ավելի շուտ աշխատունակությու-
նից ես քաղցած բարեկամս, մի բան վոր բո-
լորովին վախել չի կոմյերիտականին:

— Թե կոմյերիտականն ես հարցնում, յես

չատ լավ կոմյերիտական եմ, դու յեւ վոր իմ
դրությանը լինեյիր ետենց կխոսայիր...

— Լա՛վ, բարեկամս, յես վիճելու ժամա-
նակ չունեմ... Թվաբանություն սովորի, արի
քեզ տրակտորիստների կուրսերն ուղարկենք:
Ուրիշ գործ չկա, կամ թե չե գնա գյուղը և
ձեր տնտեսության մեջն աշխատիր:

Քաղաքային այգու մի հաստարուն ծառի
տակ նստած, միտք եր անում Արտոն: Ծառը
գորովոտ մոր նման կռացած, ասես գուրգու-
րում եր նրան:

— «Յանի ինչ հասկացա ես քաղաք գալուց:
Գեղումն ելի լավ եր, կուչտ փորով ելա հաց
ուտում եյի: Տարի ու կես ա վոչ մի փեշակ չը
սովորեցի, վոչ ել գրի սեն ու սպիտակը ջոկե-
ցի, համա գեղի շկոլում սովորող Գերասիմն ու
Սեդրակն ով ա իմանում հմի «Մաճկայ» ու
«Ավանգարդ» են կարդում: Յես իմ ձեռով իմ
տունս քանդեցի... Ընչի՞ս եր պետք քաղա-
քը...»

Նրա մտքում ելի իրենց գյուղն եր կենդա-
նացել: Ելի իրենց սարերն եյին՝ կարմիր կա-
կաչներով ու վայրի շուշաններով զարդար-
ված: Ելի գյուղի տներն եյին խուժանի պես
խառն ու խոխիվ:

Ահա նրանց ծուռ փողոցը և սեւ պատերով
խրճիթն այդ խուժանի մեջ:

Նորից նավթի ճրաղը կծկված ճրաղակալի

վրա, լուռ հեկեկում եր ու նրա նվաղում լույ-
սի տակ, թոնիրի շութին նստած, Արո ապին
խրատներ եր կարդում վորդու գլխին: Խոսում
ոջախի, ապրուստի և «հորվորդի աղջկա» մա-
սին:

— «Գնամ գյուղ, ենդի մի կերպ յուլա կը
գնամ, համա եստեղ՝ ել ապրել չի լինի...»:

Իսկ ապի՞ն: Չե՞ վոր նա կարող եր չընդու-
նել, ներս չթողնել իր ոջախի գլխին քար քցող
«բեղովլաթ» վորդուն:

— «Վոչի՞նչ, ապու ձեռը կպաչեմ, գլխիս
կը դնեմ, կասեմ ապի մի դալաթ եր արի, հա-
լալ արա...»:

Վճռված եր:

Գյուղում ինչքա՛ն բաներ եյին փոխվել...

Չարչի Չալոյի դուքանի տեղ կոոպերատիվի խանութ եր բացվել՝ կապույտ դռներով: Գարակները՝ լիք ապրանք: Հաճախորդները՝ շատ:

Հին խարխուլած դպրոցն ել՝ ճանաչել չեր լինում: Կոկիկ, սպիտակ ներկած պատերով և շուշա պատուհաններով:

Գյուղի յեկեղեցին ել ասես փոխվել եր Արտոյի աչքին, խաչն ավելի յեր ծովել մի կողմի վրա ու մամուռը թանձրացել եր նրա թեք կողերին: Գռան առջևն ել՝ փոշի, խոտի ու հարդի շյուղեր եյին կուտակվել և ասես ամիսներ շարունակ մարդկային վոտքը չեր խանդարել նրանց անդորրությունը:

— «Յարար հմի յել ժամ եթացող կա՛» — մտածեց Արտոն, յերբ անցնում եր նրա մամուտած ու գորշ պատերի մոտով:

Գյուղում ելի նոր բաներ կային:

Կարմիր փողկապավոր ու մերկասրունք պիտներները:

Ասես Արտոյին հանդիմանելու համար, նրանք փոքրիկ թմբկահարն առաջներն արած, լամբողջ շարքով դուրս յեկան Աղբրի քուչից ու ձգվեցին դեպի քաղաք տանող ճանապարհը:

— Մեկ, յերկու՛, մե՛կ յերկու՛, ձա՛խ, ա՛ջ, ձա՛խ, ա՛ջ...:

Արտոն տխուր ու մտազբաղ, յերկար նայում եր ուրախ շարքերի յետեվից:

Մենակ սրանք չեյին: Ելի նոր բաներ կային...: Կոմսոմոլիստ Հարոն դյուղխորհրդի նախագահ եր դարձել, իսկ Ալեքն ել՝ բառրակկոմի նախագահ:

— «Լա՛վ են առաջ դնացել հա՛ա՛...» — մտածեց Արտոն:

Նեղլիկ դռանն, արտասովախառն աչքերով և դուրդոջ քայլերով վորդուն դիմավորեց ծեր մայրը: Նրա դեմքն ավելի յեր գունատվել, կնճռոտվել ու հողի դույն դարձել:

Նա ամուր դրկեց և համբուրեց կորած վորդուն ու նվաղ ձայնով հեկեկաց.—

— «Վա՛խ, բալա... հերդ մեռավ. կովը ծախեցինք... արտն ել Գարսեան աղեն եր ուղում զավթել... Համա ձեր պնիհները լա՛վ քոմազ արին հա՛...: Հերդ նրանց որհնելով մեռավ... վա՛խ, բալա, վա՛խ...:

Վողջ տունը շուռ յեկավ Արտոյի գլխին, աչքերը մթնեցին, նա յերերվեց մոր գրկում... Կինո-լինտի արագությամբ մտքովն անց կա-

ցավ ամբողջ պատմութիւնը: Նա զգաց իր սը-
խալը, ծուլութեան հետեանքները... մտքում
հանդիմանեց իրեն... բայց ոգուտն ինչ...

Մայր ու վորդի իրաջ գրկած դեռ յեր-
կար հեկեկում եյին...:

1926—1927



96

ՀՀ Ազգային գրադարան



NL0328309

14.734

911

20.1

34
62019



ԱԼԱՅԱՆ
ԴԵԶԵՐՏԻՐ
ԳԻՅ. ՍՍՐ ԱՐՄԵՆԻԱ, ԵՐԻՎԱՆ

1/2